

## ԲԱԺԻՆ 2.

### ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ, ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ, ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ, ՀԵՆԱՆԻՇԵՐԸ ԵՎ ԱՆՀՐԱՄԺԵՇՏ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

#### 1. Ամփոփագիր

Եվրամիության հետ Գործընկերության և համագործակցության համաձայնագրի (ԳՀՀ) կնքմանը հաջորդած ժամանակահատվածում ՀՀ տնտեսությունը շարունակեց արագ տեմպերով զարգանալ: Գնալով սերտանում է համագործակցությունը ԵՄ անդամ պետությունների հետ: Համագործակցության նոր հեռանկարներ են բացվում Եվրոպական հարևանության քաղաքականության (ԵՀԶ) շրջանակներում: 2003թ. օգոստոսին ՀՀ կառավարությունը հաստատել է Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիրը (ԱՀՌԾ) և ձեռնամուխ է եղել դրա իրագործմանը: Սույն ծրագրի շրջանակներում կատարված տնտեսագիտական վերլուծությունները թույլ են տալիս ԱՀՌԾ իրականացման ընթացքը դրական գնահատելու և ԱՀՌԾ իրականացման սցենարը համարելու համապատասխան ԳՀՀ իրագործման ազգային ծրագրի նպատակներին:

Ազգային ծրագրի շրջանակներում ՀՀ կառավարությունը հետամուտ է լինելու հետևյալ առաջնահերթ նպատակների իրագործմանը.

- Հաշվի առնելով ՀՀ-ում առկա տնտեսական աճի 2003-2005թթ. նկատելիորեն ավելի բարձր տեմպերը, քան նախատեսված էր ԱՀՌԾ-ով, ինչպես նաև 2006-2007թթ. սկսած սպասվելիք նկատելի լրացուցիչ միջոցների ներհոսքը Հազարամյակի մարտահրավերների հաշվի (MCA), Ասիական զարգացման բանկի և Լինսի հիմնադրամի շրջանակներում, ինչպես նաև 2003-2005թթ. շինարարության և գյուղատնտեսության կանխատեսվածից բարձր աճը, ԱՀՌԾ սցենարով տնտեսության աճի ապահովումը ՀՀ կառավարությունը ներկայումս գնահատում է որպես տնտեսական աճի ծրագրված նվազագույն մակարդակ, և իրական տնտեսական աճը կանխատեսվում է ավելի բարձր տեմպերով<sup>1</sup> (ԱՀՌԾ-ի ծրագրած գնաճի 3 տոկոսանոց մակարդակի պայմաններում):

- ՀՀ կառավարությունը հնարավոր բոլոր միջոցներով (մակրոտնտեսական և հարկաբյուջետային քաղաքականության, մարքեթինգի, արդյունաբերական քաղաքականության և այլ լծակներով) կնպաստի ԳՀՀ և ԵՀԶ շրջանակներում ԵՄ-ի հետ առևտրատնտեսական կապերի հետագա խորացման գործընթացին՝ վերջինիս ընթացքն արագացնելու նպատակով: Եվրամիության հետ համագործակցության շրջանակներում կարևոր խնդիր է շուկայական տնտեսություն ունեցող երկրի կարգավիճակի ստացումը Եվրամիությունում: Այդ գործընթացները ՀՀ կառավարությունը սկսել է 2005 թվականից: Կառավարությունը նաև կնպաստի ԵՄ-ի հետ ազատ առևտրի համաձայնագրի կնքման համար 2006-2008թթ. անհրաժեշտ նախադրյալներ ձևավորելուն:

ՀՀ կառավարության տնտեսական քաղաքականության միջոցառումները 2006-2008թթ. նպատակադրված կլինեն Հայաստանի և ԵՄ նոր անդամ ու անդամակցող երկրների միջև կառավարման, գործարար և ներդրումային միջավայրը բնութագրող մի շարք ցուցանիշների գծով տարբերության նկատելի կրճատմանը<sup>2</sup>: Այդ առումով 2006-2008թթ. Հայաստանի տնտեսական քաղաքականության հիմնական գերակայություններ կհանդիսանան՝

- պետական կառավարման համակարգի արդյունավետության բարձրացումը,
- հակամենաշնորհային պայքարի խստացումը ու շուկա ազատ մուտք գործելու խոչընդոտների վերացումը,
- ՀՀ ապրանքների և ծառայությունների արտահանման խթանումը,
- մարդկային և ֆիզիկական ներուժի պահպանումը ու կուտակումը,
- արժեթղթերի շուկայի, բանկային համակարգի և ֆինանսական ոչ բանկային ծառայություններ մատուցող հաստատությունների զարգացման խթանումը:

<sup>1</sup> Ավելի հանգամանորեն ՀՀ կառավարությունը կանդադարանա երկրի մակրոտնտեսական շրջանակի խնդիրներին 2006թ. սպասվող ԱՀՌԾ-ի փոփոխված և լրացված տարբերակի մշակման ընթացքում:

<sup>2</sup> Նշված ցուցանիշների ընտրությունը կատարվել է հատուկ մշակված մաթեմատիկական մոդելի օգնությամբ, որով գնահատվել է նշված ցուցանիշների էական լինելը ԵՄ և այդ երկրների միջև անդամակցության բանակցություններ սկսելու գործում:

## 2.1.Ներածություն

ՀՀ կառավարությունը Հայաստանի և Եվրամիության Գ-ՀՀ իրականացման Ազգային ծրագրի (ԱԾ) մշակման ընթացքում լայնորեն կիրառել է ԵՄ նոր անդամ և անդամակցող երկրների փորձը և մեթոդաբանությունը:

Եվրամիության (ԵՄ) ընդլայնման վերջին ալիքը էական տեղաշարժեր առաջ բերեց Միության սահմանների քաղաքական և տնտեսական աշխարհագրության առումով: Արդյունքում ԵՀԶ շրջանակներում ԵՄ-ն նպատակ դրեց խորացնել տնտեսական և քաղաքական համագործակցությունը հարևան երկրների հետ, որը պետք է հիմնվի ընդհանուր արժեքների վրա: Եվրոպական հանձնաժողովի երաշխավորությամբ 2004թ. հունիսի 14-ին ԵՄ Նախարարների խորհուրդը Հայաստանը Հարավային Կովկասի մյուս երկու երկրների հետ մեկտեղ ներառեց ԵՀԶ-ում՝ նոր հեռանկարներ ստեղծելով հայ-եվրոպական տնտեսական համագործակցության համար և «... առաջարկելով ԵՄ-ի հետ էլ ավելի սերտ հարաբերությունների հեռանկարներ, ներառյալ՝ տնտեսական ինտեգրացման զգալի աստիճան և խորացող քաղաքական համագործակցություն»<sup>3</sup>:

Սույն ծրագրով կիրառվող երկրի տնտեսության և տնտեսական քաղաքականության գնահատման մեթոդաբանությունը հիմնված է ԵՄ-ն անդամակցող երկրների քաղաքական և տնտեսական առաջընթացը բնութագրող Կոպենհագենյան տնտեսական հայտանիշների վրա, իսկ ՀՀ տնտեսությունը և տնտեսական զարգացումը բնութագրող ցուցանիշների կանխատեսումները հիմնված են ՀՀ կառավարության 2003թ. օգոստոսի 8-ի թիվ 994-Ն որոշմամբ հաստատված ԱՀՌԾ-ով նախատեսված սոցիալ-տնտեսական և ինստիտուցիոնալ ցուցանիշների կանխատեսումների վրա:

Սույն ծրագրի հիմնական նպատակն է Կոպենհագենյան տնտեսական հայտանիշների շրջանակում հասնել դրանց այնպիսի մակարդակի, որ հնարավորինս կրճատվի տարբերությունը Հայաստանի ու ԵՄ նոր անդամ և անդամակցող երկրների միջև: Որպես համեմատության կետ՝ ընդունվում է համապատասխան ցուցանիշների այն մակարդակը, որը ԵՄ նոր անդամ և անդամակցող երկրներից յուրաքանչյուրն ունեցել է ԵՄ անդամակցության բանակցություններն սկսելու տարում (1999-2001 թ.թ.):

## 2.2. Հայաստանի սոցիալ-տնտեսական զարգացման միտումները 1999-2005թթ.<sup>4</sup>

Հայաստանի Հանրապետության ՀՆԱ-ն 2005թ. կազմել է շուրջ 3.91 մլրդ եվրո, մշտական բնակչության թիվը՝ 3217.6 հազար մարդ: Անկախության առաջին իսկ տարիներից սկսած՝ բարեփոխումների ազատական ուղու ընտրության արդյունքում անցումային երկրների խմբում Հայաստանն այսօր կարող է բնութագրվել որպես ամենաադրամալի զարգացող տնտեսություններից մեկը: Այսօր ՀՀ տնտեսությունը համարվում է ամենաազատականը ԱՊՀ երկրների մեջ, իսկ մակրոտնտեսական կայունությունը երկրում հաստատվել և պահպանվում է 1996-ից ի վեր<sup>5</sup>:

Բարեփոխումների հետևողական իրագործումը և կայուն ներքին քաղաքական իրավիճակը Հայաստանին թույլ տվեց շուկայական տնտեսության անցնելու գործընթացում հասնելու նշանակալից արդյունքների, մասնավորապես՝ մասնավոր հատվածի զարգացման, գների և արտաքին տնտեսական հարաբերությունների ազատականացման բնագավառներում:

<sup>3</sup> European Neighbourhood Policy: Armenia (IP/05/237), Brussels, 2 March 2005

<sup>4</sup> Սկսած Գ-ՀՀ ուժի մեջ մտնելու տարվանից (1999թ.):

<sup>5</sup> ԶՎԵԲ «Անցումային զեկույց 2005»

**Աղյուսակ 1. Հիմնական տնտեսական միտումները**

Հայաստանի Հանրապետություն	1999թ.	2000թ.	2001թ.	2002թ.	2003թ.	2004թ.	2005թ.	Միջինը
Իրական ՀՆԱ-ի աճի տեմպը (%)	3.3	5.9	9.6	13.2	14.0	10.1	13.9	9.92
<b>Գնաճը,</b>								
տարեկան միջին (%)	0.6	-0.8	3.1	1.1	4.7	7.0	0.6	2.30
Ժամանակահատվածը (%)	2.0	0.4	2.9	2.0	8.6	2.0	-0.2	2.49
<b>Գործազրկությունը</b>								
ազգային բնորոշում (%)	11.2	11.7	10.4	10.8	10.1	9.4	8.1	10.27
LFS բնորոշում (%)	...	...	38.4	35.3	31.2	31.6 (M8)	...	34.12
Համախմբված բյուջեի հաշվեկշիռ (% ՀՆԱ-ում)	-5.4	-4.8	-4.2	-2.5	-1.3	-1.5	-1.82	-3.07
<b>Ընթացիկ հաշվի հաշվեկշիռ</b>								
% ՀՆԱ-ում	-16.6	-14.6	-9.5	-6.2	-6.8	-4.5	-4.19	-8.91
մլն €	-287.3	-301.1	-221.0	-156.6	-168.7	-130.2	-163.9	-204.1
<b>Ընդհանուր արտաքին պարտքը</b>								
արտահանման նկատմամբ, %	219.4	192.2	169.9	126.4	122.8	119.8	83	147.6
մլն €	786.8	929.2	1010.9	933.9	982.7	950.6	882.2	925.2
<b>ՕՈՒՆ ներհոսք, վճարային հաշվեկշիռի տվյալներ</b>								
% ՀՆԱ-ում	5.9	4.8	3.1	4.4	3.8	5.9	5.55	4.8
մլն €	101.7	99.2	73.5	110.7	96.4	170.0	217.1	124.1

Աղբյուրը. ՀՀ ԱՎԾ/«Հայաստանյան զարգացումներ» վիճակագրական հավելված և լրացուցիչ հաշվարկներ

1999թ. Հայաստանի և ԵՄ-ի միջև Գ-ՀՀ ուժի մեջ մտնելուն հաջորդող ժամանակահատվածում տնտեսությունն արձանագրել է տնտեսական աճի բարձր տեմպեր: 2001թ. ՀՆԱ-ի տարեկան հավելումի տեմպը կազմեց 9.6%, իսկ 2002-ից սկսած՝ գերազանցեց 10%-ի սահմանագիծը: 2005-ին տնտեսական աճը կազմում է 13.9%, այսինքն 2005թ. նույնպես պահպանվել է տնտեսական աճի երկնիշ մակարդակը: 2005թ. ՀՆԱ-ի աճում լուրջ ավանդ ունեցան ծառայությունների ոլորտը՝ 3.7 տոկոսային կետ, շինարարությունը՝ 5.4 տոկոսային կետ, և գյուղատնտեսությունը՝ 2.5 տոկոսային կետ:

Համախմբված բյուջեի պակասուրդը ՀՆԱ-ի նկատմամբ 1999-ի 5.4%-ից նվազեց՝ 2005ին կազմելով 1.82 Տվյալ ժամանակահատվածում կրճատվեց նաև ընթացիկ հաշվի պակասուրդը՝ 16.6%-ից 4.19%:

Այս ընթացքում Հայաստանին հաջողվեց խորացնել տնտեսական հարաբերությունները ԵՄ-ի հետ: 2005թ. Հայաստանի արտաքին ապրանքաշրջանառությունը ԵՄ-ի հետ կազմեց ընդհանուր ապրանքաշրջանառության 34.8-ը:

1995թ. սկսած լայնածավալ մասնավորեցման գործընթացի արդյունքում պետական գույքի հիմնական մասն արդեն մասնավորեցված է: Մասնավորեցման ընթացիկ ծրագիրը հաստատվել է 2001-ին: Միաժամանակ շուկա մուտքի խոչընդոտների աստիճանական կրճատումը էականորեն բարելավեց գործարարության և ներդրումային միջավայրը և նպաստեց տնտեսության մասնավոր հատվածի տեսակարար կշռի աճին:

Վերջին մի քանի տարվա ընթացքում էական առաջնթաց է արձանագրվել գործարարության միջավայրի որակի բարձրացման գործում: Համաձայն Համաշխարհային բանկի “Doing Business -2006” վերջին զեկույցի՝ Հայաստանը 2004թ. դրությամբ ըստ գործարար միջավայրի որակի համալիր ինդեքսի մեծության՝ 155 երկրներից գրավել է 46-րդ տեղը՝ առաջ անցնելով ԱՊՀ բոլոր երկրներից և զբաղեցնելով 6-րդ տեղը բոլոր անցումային երկրների մեջ (Բալթյան երկրներից, Սլովակիայից և Չեխական Հանրապետությունից հետո): Նշված ինդեքսը ձևավորվում է որպես հետևյալ ցուցանիշների թվաքանակային միջինը՝

- շուկա մուտք գործելու (նոր գործ սկսելու) ինդեքսը՝ 41-րդ տեղը կամ 6-րդը անցումային երկրների մեջ (Ռումինիայից, Ռուսաստանից, Ղազախստանից, Սերբիայից և Լիտվայից հետո).
- լիցենզավորման պարզության ինդեքսը՝ 55-րդ տեղը՝ առաջինը ԱՊՀ երկրների և 6-րդը բոլոր անցումային երկրների մեջ (Էստոնիայից, Լիտվայից, Սլովակիայից, Լատվիայից և Սլովենիայից հետո).
- աշխատանքի վարձելու և աշխատանքից ազատելու ինդեքսը՝ 78-րդ տեղը կամ 11-րդ տեղը անցումային երկրների միջև.
- սեփականության գրանցման ինդեքսը՝ 9-րդ տեղը և 3-րդը անցումային երկրների մեջ (Լիտվայից և Սլովակիայից հետո).
- վարկավորման բարդության ինդեքսը<sup>6</sup>՝ 78-րդ տեղը կամ 19-րդ տեղը անցումային երկրներում և 5-րդը ԱՊՀ-ում.
- ներդրողների պաշտպանության աստիճանի ինդեքսով Հայաստանը չի որակավորվել, որը կապված է արժեթղթերի շուկայի ըստ էության բացակայության հետ.
- հարկերի վճարման ինդեքսով<sup>7</sup>՝ 147-րդ տեղը 154 երկրներից՝ առաջ անցնելով ԱՊՀ-ում միայն Բելառուսից և Ուկրաինայից.
- արտաքին առևտրի իրականացման հեշտության ինդեքսով՝ 82-րդ տեղը և 15-րդ տեղը անցումային երկրների մեջ՝ զիջելով ԵՄ բոլոր նոր անդամ և անդամակցող երկրներին, ինչպես նաև Բելառուսին, Ռուսաստանին, Ուկրաինային և Մոլդովային.
- պայմանագրերի իրականացման ապահովման ինդեքսով՝ 36-րդ տեղը, 6-րդ տեղը անցումային երկրներում և առաջինը ԱՊՀ-ում.
- գործունեությունն ավարտելու ապահովման հեշտության ինդեքսով՝ 39-րդ տեղը, 4-րդ տեղը անցումային երկրների մեջ և առաջինը ԱՊՀ-ում:

Նշված ցուցանիշները ուղղակիորեն ուրվագծում են տնտեսական համակարգի զարգացման ներկայիս հիմնական խոչընդոտները և ցույց են տալիս հետագա (երկրորդ սերնդի) միկրոմակարդակի տնտեսական բարեփոխումների գերակա ուղղությունները, որոնք հիմնականում համապատասխանում են ԱՀՌԾ-ում նշված գործարար միջավայրի բարելավման գերակայություններին, մասնավորապես՝ արտոնագրման անվանացանկի և գործընթացների հետագա կրճատումը և պարզեցումը, գործատու - աշխատող - պետություն հարաբերությունների հստակեցումը և հետագա պարզեցումը, ներմուծման ձևակերպումների պարզեցումը, մաքսային ձևակերպումների վրա ծախսվող ժամանակի էական կրճատումը, մաքսային օրենսդրության դրույթների խստիվ կատարումը և արտահանողներին ԱԱՀ վերադարձի գործընթացների հստակեցումը:

Ինչպես վկայում են վերը նշված ցուցանիշները, Հայաստանի տնտեսական զարգացման և պետական կառավարման համակարգի արդյունավետության աճի հիմնական խոչընդոտներ են շարունակում մնալ հարկահավաքման համակարգի դեռևս թույլ ինստիտուցիոնալ կարողությունները և ֆինանսական համակարգի ոչ բավարար մասնակցությունը տնտեսության ֆինանսավորման գործում:

Ֆինանսական համակարգի թույլ կողմ է մնում արժեթղթերի շուկայի, ապահովագրության և ոչ բանկային ֆինանսական ինստիտուտների զարգացումը: Վերջինս, դատելով նաև մյուս անցումային երկրներում նման խնդիրների առկայությունից, համեմատաբար ավելի երկար ժամանակ է պահանջում: ՀՀ կառավարությունը հետագայում նույնպես մեծ ուշադրություն կդարձնի տնտեսության այս հատվածի զարգացման խթանման վրա:

<sup>6</sup> Վարկավորման բարդության ինդեքսը բնութագրում է վարկառուների և վարկատուների իրավական պաշտպանության, ինչպես նաև վարկային տեղեկատվության հասանելիության և որակի աստիճանը:

<sup>7</sup> Գումարային ցուցանիշ է, որը բնութագրում է վճարվող հարկերի քանակը, հարկերի վճարման և վերադարձի վրա ծախսված ժամանակը, ինչպես նաև վճարված հարկերի հարաբերակցությունը համախառն շահույթին:

Վերջին տարիներին տնտեսական աճի բարձր տեմպերի ապահովումն առաջին քայլն էր եվրոպական կենսամակարդակին Հայաստանի մոտեցման ուղղությամբ, սակայն մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ների շեղումը դեռևս բավական մեծ է: Գնողունակության համարժեքությունը հաշվի առնելով՝ 2004թ. դրությամբ ՀՀ մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն կազմել է ԵՄ անդամ երկրների միջին ցուցանիշի ընդամենը 16%-ը<sup>8</sup>:

**Աղյուսակ 2. Մակրոտնտեսական ցուցանիշները 2004-2005 թվականներին**

Ցուցանիշը	2004	2005
<b>Բնակչությունը (հազար մարդ)</b>	3,214	3,217.6
<b>ՀՆԱ մեկ շնչի հաշվով</b>		
ԳՀ, ԱՄՆ դոլար	4,221	5, 767*
ԵՄ միջինի նկատմամբ, %	16.0	21.8**
<b>Գյուղատնտեսության բաժինը<sup>u</sup></b>		
ընդհանուր ավելացված արժեքում, %	22.7	18.8
գրավվածության մեջ, %	46.9 <sup>p</sup>	...
<b>Հիմնական միջոցների համախառն կուտակման բաժինը ՀՆԱ-ի կազմում, %</b>	24.7	28.3
<b>Ընդհանուր արտաքին պարտքը ՀՆԱ-ի համեմատ, %</b>	33.3	22.6
<b>Արտահանման բաժինը ՀՆԱ-ում, %</b>	27.7	27.2
<b>ՕՈՒՆ կուտակային ցուցանիշը</b>		
մլն €	810.2	1023.7
մեկ շնչի հաշվով €	252.1	318.1
<b>Գործազրկություն<sup>q</sup> (աշխատուժի նկատմամբ, %)</b>	9.6	8.1

\* Հաշվարկված է 2004թ. Համաշխարհային բանկի 2004թ. տվյալներով, տես. World Development Report 2006, Աղյուսակ 1, 2005

\*\* ԵՄ 2004թ. միջինի նկատմամբ

<sup>u</sup> Ներառում է գյուղատնտեսությունը, որսորդությունը, անտառային տնտեսությունն ու ձկնորսությունը:

<sup>p</sup> Օգոստոս ամսվա դրությամբ:

<sup>q</sup> Ցուցանիշը՝ ըստ ՀՀ ազգային բնորոշման:

Աղբյուրը. ՀՀ ԱՎԾ/«Հայաստանյան զարգացումներ» վիճակագրական հավելված, «Համաշխարհային զարգացման ցուցանիշներ» տվյալների բազան (ՀԲ) և լրացուցիչ հաշվարկներ:

**2.2.1.Սոցիալ-տնտեսական բարեփոխումները՝ ըստ առանձին ոլորտների**

**Տնտեսական աճ**

Հայաստանը զգալի տնտեսական առաջընթաց է ունեցել՝ 1994-2005թթ. միջին տարեկան 8.2% անընդհատ տնտեսական աճի շնորհիվ, որը բոլոր անցումային երկրների մեջ ամենաբարձր ցուցանիշն է: Տնտեսական աճի տեմպը էականորեն ավելացել է 2001-2005թթ.՝ կազմելով միջին տարեկան 12.1%: Հայաստանը 2005-ին գերազանցել է 1990-ի մակարդակը 20.3%-ով (ի համեմատություն 1994-ի 2.43 անգամ): 1989-ի մակարդակի համեմատ 2005-ին ՀՀ ՀՆԱ-ն կազմել է 113.7%: 2005-ին ՀՆԱ 18.8%-ը ստեղծվել էր գյուղատնտեսության, 18.7%-ը՝ արդյունաբերության, իսկ 21.6%-ը՝ շինարարության ոլորտներում: Մեկ շնչի հաշվով անվանական ՀՆԱ-ն 2005թ. կազմել է 1214.0 եվրո:

**Մակրոտնտեսական կայունություն**

Մակրոտնտեսական կայունությունը տնտեսությունում հաստատվել է դեռևս 1996 թվականից, երբ հաջողվեց զսպել 1993-ին ազգային արժույթի ներդրմանը հաջորդած ինֆլյացիոն երևույթները: 1996-ից ի վեր ՍԳԻ հավելաճի միջին տարեկան տեմպը կազմել է 6.2%: ԳՀ-ը ուժի մեջ մտնելու պահից ի վեր (1999-2004թթ.) այս ցուցանիշը կազմել է 2.6%: 1999-ի

<sup>8</sup> Համաշխարհային բանկի տվյալները և լրացուցիչ հաշվարկներ:

հուլիսից 2005-ը ներառյալ ժամանակահատվածում եռամսյակային միջին տվյալներով մեկ եվրոյի փոխարժեքը միջինում կազմել է 569.5 դրամ<sup>9</sup>:

### **Հարկարյուջետային հատվածի բարեփոխում**

1999-2005թթ. ժամանակահատվածում համախմբված բյուջեի պակասուրդը կրճատման կայուն միտումներ է դրսևորել՝ պայմանավորված հարկերի հավաքման ծավալների բարձրացմամբ և բյուջեի ծախսերի պատշաճ ծրագրմամբ: Մակայն հարկային եկամուտների հավելաճի տեմպերն այս ընթացքում հետ են մնացել տնտեսական աճի տեմպերից. 1999-ին բյուջեի հարկային եկամուտները ՀՆԱ-ի նկատմամբ կազմել են 15.6%, որից հետո մինչև 2005-ը իջել են 15%-ի սահմանագծից՝ 2005-ին կազմելով 13.6%: Փաստացի և ներուժային հարկային մուտքերի միջև դեռ գոյություն ունի զգալի ճեղքվածք: 2005-ի դրությամբ հարկային մուտքերի 60.9%-ն ապահովվում էր ի հաշիվ անուղղակի հարկերի, և ընդամենը 24%-ը՝ եկամտահարկի և շահութահարկի հաշվին: Գույքից զանձվող հարկերի բաժինը 1999-2004թթ. չի գերազանցել 3%-ի սահմանը՝ 2004-ին կազմելով 2.8%: Հարկային եկամուտների մակարդակի բարձրացումը ՀՀ կառավարությունը դիտում է տնտեսական աճի բարձր տեմպերի ապահովման հետ մեկտեղ՝ որպես սոցիալական քաղաքականության արդյունավետության բարձրացումն ապահովելու գլխավոր գործիք:

### **Գրանավարկային համակարգ**

ՀՀ կենտրոնական բանկը, ներդնելով ՀՀ ազգային արժույթը (ՀՀ դրամ), որդեգրեց փոխարժեքի լողացող ռեժիմի քաղաքականությունը: ԳՀՀ-ն ուժի մեջ մտնելուց հետո մինչև այժմ ընտրված քաղաքականությունից շեղում չի կատարվել: 1993-2003թթ. դրամի թե՛ անվանական, թե՛ իրական արդյունավետ փոխարժեքները աստիճանական արժեզրկման միտում են ցուցաբերել: 2003-ի վերջից, ինչպես մի շարք այլ երկրներում, սկսվեց ազգային արժույթի արժեքավորում, որը հիմնականում բացատրվում է արտաքին գործոնների ազդեցությամբ:

### **Աշխատաշուկան և սոցիալական վիճակը**

1990-ականներից սկսած՝ զանգվածային արտագաղթը փոփոխություններ առաջ բերեց աշխատուժի կառուցվածքում՝ կրճատելով Հայաստանի մարդկային կապիտալի պաշարը: ՀՀ ԱՎԾ գնահատմամբ 2005թ. տնտեսապես ակտիվ բնակչության թիվը Հայաստանում կազմում է 1,203.3 հազ. մարդ: Պաշտոնական գործազրկության մակարդակը Հայաստանում 2005թ. վերջի դրությամբ կազմում է ընդամենը 8.1%: Գործազրկության մակարդակը համեմատաբար բարձր է Շիրակի, Սյունիքի և Լոռու մարզերում (2005-ի դրությամբ՝ համապատասխանաբար 17.5%, 17.7% և 17.2%<sup>10</sup>): Ներկայումս զբաղվածների շուրջ 70%-ը ներգրավված է փոքր բիզնեսում և գյուղատնտեսության ոլորտում<sup>11</sup>: Գործազրկության մակարդակը, ըստ LFS սահմանման, շատ ավելի բարձր է. այն 2004-ի օգոստոսի դրությամբ կազմել է 31.6%:

Տնտեսական աճի կայուն բարձր տեմպերի արդյունքում 1999-ի համեմատ միջին ամսական աշխատավարձի իրական ցուցանիշը 2005-ին աճեց 2.2 անգամ: Միջին աշխատավարձը 2005-ին ՀՀ-ում կազմեց 52 հազար դրամ (կամ 91.2 եվրո):

Տնտեսական առաջընթացը հնարավորություն տվեց նաև որոշակի արդյունքների հասնել աղքատության դեմ պայքարի բնագավառում: Եթե 1998-1999թթ. աղքատության գծից ցած գտնվող բնակչության թիվը կազմում էր 56%, 2003-ին այն կազմեց 42.9%, իսկ 2004-ին կրճատվեց մինչև 39%-ի<sup>12</sup>: Առաջխաղացում է գրանցվել նաև եկամուտների բաշխման ուղղությամբ: Զինիի գործակիցն ըստ եկամուտների, որ 2001-ի դրությամբ Հայաստանում կազմում էր 0.528, 2004-ին կրճատվեց մինչև 0.387-ի<sup>13</sup>:

Զբաղվածության կայունացման և հետագա աճին նախատեսվում է հասնել հիմնականում փոքր և միջին ձեռնարկությունների զարգացման հաշվին:

<sup>9</sup> ՀՀ ԱՎԾ տվյալների հիման վրա լրացուցիչ հաշվարկներ:

<sup>10</sup> «Պարենային ապահովություն և աղքատություն 2005 թվականի հունվար-մարտին», ՀՀ ԱՎԾ:

<sup>11</sup> Commission staff working paper annex to “European Neighbourhood Policy” Country Report for Armenia.

<sup>12</sup> ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության 2004 թվականի գործունեության հաշվետվություն: 2004 թվականի համար բերված է ցուցանիշի նախնական գնահատականը:

<sup>13</sup> «ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2005 հունվար-սեպտեմբեր» ՀՀ ԱՎԾ: Համաշխարհային բանկի նոր մեթոդաբանությամբ, որը կիրառվել է 2004թ. ընտրանքային հետազոտությունների արդյունքների վրա, աղքատության մակարդակը Հայաստանում 2004թ. կազմել է 34.6%. Տես Հայաստանի Սոցիալական պատկերը և աղքատությունը: Երեվան, 2006

## Կրթություն և գիտություն

Բնակչության կրթական մակարդակը բավականին բարձր է: Գրագիտության ցուցանիշը 2002թ. դրությամբ կազմում էր 99.4%<sup>14</sup>: Կրթական համակարգը բաղկացած է նախադպրոցական, տարրական ընդհանուր, հիմնական ընդհանուր, միջնակարգ (լրիվ) ընդհանուր, նախնական մասնագիտական, միջին մասնագիտական, բարձրագույն մասնագիտական և հետբուհական մակարդակներից, որոնցից հիմնական ընդհանուրը պարտադիր է: Հանրային կրթությունը Հայաստանում անվճար է: Տարրական դասարաններում ընդգրկված երեխաների բաժինը համապատասխան տարիքի երեխաների խմբում 2004թ. կազմում էր 90%, իսկ հանրակրթական համակարգի համար համարժեք ցուցանիշը կազմում էր 87.4%<sup>15</sup>: Պետական և համայնքային բյուջեներից ծախսումները կրթության ոլորտում 2000-2003թթ. ընթացքում ՀՆԱ-ի նկատմամբ 2.9%-ից իջել են 2.2%-ի, իսկ 2004թ. կազմել են 2.6%<sup>16</sup>: Կրթության նախարարների՝ 2005-ի մայիսի Բերգենյան զագաթաժողովին Հայաստանը միացավ 1999թ. Բոլոնիայի հռչակագրով սկիզբ դրված «Բոլոնիայի գործընթացին»՝ բարձրագույն կրթության եվրոպական համակարգին լիարժեք ինտեգրման նպատակով:

Գիտահետազոտական աշխատանքների վրա կատարվող հանրային ծախսերը գնահատվում են մոտ 0.9% ՀՆԱ<sup>17</sup> և հետագայում պետք է ավելանան 2006-2008թթ. համար նախատեսվող բարձրագույն մասնագիտական կրթության և գիտության ոլորտների համապարփակ բարեփոխումներին զուգահեռ:

## Առողջապահություն

Հանրային առողջապահական ծառայություններ մատուցող հաստատությունները ֆինանսավորվում են պետության կողմից: Ապահովագրական համակարգի զարգացման ներկայիս մակարդակը հնարավորություն չի տալիս առողջության ապահովագրության ծառայություններ մատուցել հանրությանը: Առողջապահության համակարգում առկա է բժիշկների ավելցուկ և հիվանդանոցների կողմից մատուցվող բժշկական ծառայությունների նկատմամբ պահանջարկի անբավարարություն: Հիվանդանոցային 1 մահճակալի միջին տարեկան զբաղվածությունը 2003թ. կազմել է 169 օր<sup>18</sup>: ԱՀՌԾ-ով առողջապահության բարեփոխման համատեքստում ՀՀ կառավարությունը նախատեսում է բարելավել առողջապահական ծառայությունների որակը և դրանց մատչելիությունը հանրության համար: Պետական և համայնքային բյուջեներից ծախսումների բաժինն առողջապահության ոլորտում 2004-ին կազմում էր 1.3% ՀՆԱ<sup>19</sup>:

### 2.2.2. Կառուցվածքային բարեփոխումների ընթացքը

#### Տնտեսության ազատականացում

Տնտեսության ազատականացման գործընթացում Հայաստանը ձեռք է բերել էական նվաճումներ, որի արդյունքում 2004-2005թթ., Տնտեսական ազատության ինդեքսի<sup>20</sup> համաձայն, Հայաստանը առաջինն է ԱՊՀ երկրների և չորրորդը՝ բոլոր անցումային տնտեսությունների շարքում:

Արտարժույթի շուկան ներկայումս կարգավորվում է 2004թ. հոկտեմբերին ընդունված «Արժույթային կարգավորման և արժույթային վերահսկողության մասին» ՀՀ օրենքով: 1993թ. նոյեմբերից՝ ազգային արժույթի ներդրումից հետո, Հայաստանում գործում է լողացող փոխարժեքի ռեժիմ<sup>21</sup>: Սահմանափակումներ չեն կիրառվում ընթացիկ հաշվի գործարքների, կապիտալի շարժի հետ կապված գործարքների, արտարժույթի փոխադրման, առաքման և ներմուծման նկատմամբ, ինչպես նաև Հայաստանում և օտարերկրյա ոչ ռեզիդենտ բանկերում արտարժույթով բանկային հաշիվ բացելու դեպքում: Չարգացման և վերակառուցման եվրոպական բանկի (ՉՎԵԲ) արտաքին առևտրի և արտարժույթային գործարքների ազատականացման համաբնական

<sup>14</sup> «ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2005 հունվար-սեպտեմբեր» ՀՀ ԱՎԾ

<sup>15</sup> «Պարենային ապահովություն և աղքատություն 2005 թվականի հունվար- սեպտեմբեր », ՀՀ ԱՎԾ:

<sup>16</sup> «Պարենային ապահովություն և աղքատություն 2005 թվականի հունվար- սեպտեմբեր », ՀՀ ԱՎԾ:

<sup>17</sup> Commission staff working paper annex to “European Neighbourhood Policy” Country Report for Armenia.

<sup>18</sup> «Պարենային ապահովություն և աղքատություն 2005 թվականի հունվար- սեպտեմբեր », ՀՀ ԱՎԾ:

<sup>19</sup> «Պարենային ապահովություն և աղքատություն 2005 թվականի հունվար- սեպտեմբեր », ՀՀ ԱՎԾ:

<sup>20</sup> «Տնտեսական ազատության ինդեքս 2006թ.»։ Հերիթիջ Ֆաունդեյշն, 2006թ.:

<sup>21</sup> ԱՄՀ դասակարգմամբ Հայաստանն ունի փոխանակային կուրսի «անկախ լողացող» ռեժիմ:

Հայաստանի տնտեսությունը առավելագույն գնահատականի է արժանացել՝ 4.3 միավոր<sup>22</sup> (այս ցուցանիշով համադրելի է զարգացած երկրների հետ):

1995 թվականից ի վեր հիմնականում վերացվել են գնային վերահսկումներն ու սահմանափակումները: Բացառություն են կազմում որոշ ներքին գներ. այն է՝ ռոզգման, էլեկտրաէներգիայի, տաք ջրի, գազի, ջեռուցման, էլեկտրաէներգիայով սպասարկվող քաղաքային տրանսպորտի, կոյուղու ծառայության, աղբահավաքման և ներքին հեռախոսակապի ծառայության ոլորտի գները: Այս գները դեռ ենթակա են կարգավորման, քանի որ պետական ձեռնարկությունները դրանց բացառիկ կամ գերիշխող մատակարարներն են: Հեռախոսային ծառայությունների դեպքում գերիշխող դիրք ունի մասնավոր մատակարարը, որն այդ ծառայություններ մատուցելու բացառիկ իրավունք ուներ մինչև 2005թ<sup>23</sup>: Պետականորեն կարգավորվող բոլոր գները պարբերաբար վերանայվում են: Հայաստանում չի իրականացվում տարբերակված գնային քաղաքականություն՝ սպառողների տեսակից կախված: Ըստ ԶՎԵԲ-ի «Անցումային զեկույց 2005»-ի՝ կարգավորվող գների մասնաբաժինը սպառողական գների ինդեքսում (ՄԳԻ) Հայաստանում 2004թ. կազմել է 8%, իսկ ԶՎԵԲ-ի գների ազատականացման ինդեքսը կազմում էր 4.3<sup>24</sup>, ինչը վկայում է, որ Հայաստանում տեղի է ունեցել գների ամբողջական ազատականացում առանց գնային վերահսկման, բացառությամբ բնակարանային տնտեսության, տրանսպորտի և բնական մենաշնորհների բնագավառների:

### Մասնավորեցում

Ազգային ժողովի ընդունած մասնավորեցման հինգ ծրագրեր են իրականացվել 1995-ից սկսած: Այդ սեփականաշնորհման ծրագրերը ներառել են արդյունաբերության, գյուղատնտեսության, տրանսպորտի ոլորտների պետական ձեռնարկությունների գերակշռող մասը, ինչպես նաև բոլոր փոքր և անավարտ շինարարության օբյեկտները: Պետական գույքի մասնավորեցման հիմնգերորդ ընթացիկ ծրագիրն ընդունվեց Ազգային ժողովի կողմից 2001թ., որը ներառեց նախորդ ծրագրերում ընդգրկված բոլոր չմասնավորեցված ձեռնարկությունները: 2005թ. արդյունքներով արդեն մասնավորեցված են մոտ 1976 միջին և խոշոր պետական ձեռնարկությունները և 7295 փոքր օբյեկտներ: Ենթակառուցվածքային ձեռնարկությունների միայն մի փոքր մասն է դեռևս վերահսկվում պետության կամ մունիցիպալ իշխանությունների կողմից: Համաշխարհային բանկի օժանդակությամբ ՀՀ կառավարությունը փորձում է նպաստել մնացած պետական ձեռնարկությունների սեփականաշնորհմանը՝ հատուկ վերակազմավորման ծրագրի միջոցով: 2004-ին մասնավոր հատվածում ստեղծված ՀՆԱ-ի բաժինը հասավ 75%-ի<sup>25</sup>:

### Ֆինանսական հատված

90-ականների սկզբից ՀՀ կառավարությունը դադարել է ուղղակիորեն միջամտել ֆինանսական հատվածի գործունեությանը և փոխարենն օգտագործում է կարգավորման անուղղակի միջոցներ: 2001թ. Խնայքանկի մասնավորեցումից հետո Հայաստանի բանկային համակարգը դարձել է 100%-ով մասնավոր: Բանկային համակարգը 2005թ. սեպտեմբերի դրությամբ ներառում է 21 բանկ՝ 238 մասնաճյուղերով: Ընդհանուր կապիտալը կազմում է 85.9 միլիարդ դրամ (ՀՆԱ-ի 3.85%): Համակարգի զարգացման ուղղությամբ կարևոր քայլ էր ավանդների ապահովագրության համակարգի գործարկումը 2005թ. հուլիսին: Բանկային ոլորտում օտարերկրյա ներդրողների համար ոչ մի սահմանափակումներ չկան, կիրառվում է ազգային ռեժիմ<sup>26</sup>:

Ոլորտի զարգացման համար կարևոր նշանակություն կունենա ամբողջ ֆինանսական հատվածի կառավարման և կարգավորման կենտրոնացումը Կենտրոնական բանկում 2006թ. սկսած: Նշված քայլը հնարավորություններ կնձեռնի ֆինանսական հատվածի միասնական վերահսկման համակարգ ստեղծելու համար սկզբնական շրջանում Կենտրոնական բանկի կազմում՝ իսկ հետագայում՝ որպես անկախ կառավարման մարմին:

<sup>22</sup> ԶՎԵԲ-ի «Անցումային զեկույց 2005»:

<sup>23</sup> 2005թ. հուլիսի 1-ից սկսել է գործել շարժական հեռախոսակապի 2-րդ օպերատորը, որով վերացվել է մենաշնորհ շարժական կապի բնագավառում:

<sup>24</sup> ԶՎԵԲ-ի «Անցումային զեկույց 2005»:

<sup>25</sup> ԶՎԵԲ-ի «Անցումային զեկույց 2005»: Ըստ ՀՀ ԱՎԾ գնահատականների 2003-ին ՀՆԱ-ում մասնավոր հատվածի բաժինը կազմում էր 84.1 տոկոս:

<sup>26</sup> Բացառությամբ off-shore գոտիներում և այլ տարածքներում գրանցված ներդրողների, որոնք ցուցակագրված են Կենտրոնական բանկում: Այս ներդրողները պետք է ձեռք բերեն Կենտրոնական բանկի համաձայնությունը՝ անկախ իրենց՝ կանոնադրական կապիտալի մեջ ընդգրկվածության չափի:



Չնայած բոլոր անհրաժեշտ կարգավորումները և ինստիտուցիոնալ կառույցներն առկա են, Հայաստանում բանկային սեկտորը մնում է դեռ շատ փոքր՝ համեմատած համարյա բոլոր անցումային երկրների հետ և զիջում է իր ծավալներով Հարավային Կովկասի երկու այլ երկրներին, որտեղ այն նույնպես շատ փոքր է: Ապահովագրության շուկան դեռևս զարգացման սկզբնական փուլում է գտնվում, այն նույնպես 100%-ով մասնավոր է: 2004-ի տվյալներով Հայաստանում գործում էին 26 ապահովագրական ընկերություններ, որոնցից կանոնադրական գործունեություն էին իրականացնում միայն 21-ը: Արտոնագրված ընկերությունների համախմբված կանոնադրական կապիտալը կազմում էր միայն 2.5 միլիարդ դրամ (ՀՆԱ-ի 0.11%), իսկ գործող պայմանագրերի քանակը կազմում էր 29,499<sup>27</sup>: Ապահովագրավճարների մուտքերը այս ժամանակահատվածում ավելացել են 3.6 անգամ, ապահովագրական պահուստները՝ 2.75 անգամ, իսկ հատուցումները՝ 8.64 անգամ<sup>28</sup>: Միտումները խոսում են շուկայի աշխուժացման մասին: 2004 թվականի հունիսի 11-ին Ազգային ժողովը ընդունեց «Ապահովագրության մասին» ՀՀ նոր օրենքը: 2004 թվականի սեպտեմբերի 30-ին ընդունվեց «Ապահովագրական ընկերությունների կանոնադրական կապիտալի նվազագույն չափի մասին» ՀՀ կառավարության թիվ 1345-Ն որոշումը: Ապահովագրական համակարգի զարգացման նպատակով համագործակցություն է իրականացվում Համաշխարհային բանկի հետ՝ ապահովագրական վերահսկողության ուժեղացման և տեխնիկական աջակցության ծրագրի (FIRST) իրագործման շրջանակներում:

Արժեթղթերի շուկան կարգավորվում է 2000թ. հուլիսին ընդունված «Արժեթղթերի շուկայի կարգավորման մասին» ՀՀ օրենքով: Արժեթղթերի շուկայի ինստիտուցիոնալ կառուցվածքը ներառում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը, Կենտրոնական դեպոզիտարը (ինքնակարգավորվող կազմակերպություն՝ ստեղծված շուկայի մասնակիցների կողմից, նախատեսված «Արժեթղթերի շուկայի կարգավորման» մասին ՀՀ օրենքով), Հայաստանի ֆոնդային բորսան (ինքնակարգավորվող կազմակերպություն, ստեղծված շուկայի մասնակիցների կողմից, նախատեսված «Արժեթղթերի շուկայի կարգավորման մասին» ՀՀ օրենքով), արժեթղթերի շուկայի պրոֆեսիոնալ մասնակիցները: Չնայած արժեթղթերի շուկայի ամբողջ ինստիտուցիոնալ դաշտն առկա է, արժեթղթերի գործարքների ծավալները աննշան են՝ 2004թ. արդյունքներով ֆոնդային բորսայում ցուցակագրված էին 194 ընկերություններ<sup>29</sup>: ՀՀ արժեթղթերի շուկայի կապիտալիզացիան 2004-ին գնահատվում էր ՀՆԱ-ի մոտ 0.5%<sup>30</sup> այն դեպքում, երբ ԵՄ-ում նույն ցուցանիշը 2004թ. կազմում էր համապատասխանաբար 67.7%<sup>31</sup>:

Կառավարությունը գիտակցում է, որ ֆինանսական ոլորտի, ներառյալ՝ բանկային հատվածի արագացված զարգացումը անհրաժեշտ է միջին և երկարաժամկետ հեռանկարում՝ որպես տնտեսական աճի ներքին ֆինանսավորման աստիճանաբար աճող պահանջարկ արտաքին ֆինանսավորման հարաբերական ծավալների՝ տեղի ունեցող և սպասվելիք կրճատման պայմաններում: Այդ առումով 2006-2008թթ. Կենտրոնական բանկի հետ համատեղ համալիր միջոցառումների ծրագիր կիրականացվի բանկային, ապահովագրության (ներառյալ՝ պարտադիր ապահովագրման), հիպոթեկային և սպառողական վարկավորման, ինչպես նաև ֆինանսական շուկայի այլ ոլորտների արագացված զարգացման խրախուսման նպատակով:

## **Ենթակառուցվածքներ**

Հայաստանի Հանրապետության տնտեսության զարգացման համար տրանսպորտի ենթակառուցվածքների զարգացումը առանձնակի նշանակություն ունի՝ ելնելով առկա տրանսպորտային սահմանափակումներից : Հայաստանն աշխարհի հետ կապող ցամաքային տրանսպորտի ուղիները ներառում են Իրանով և Վրաստանով անցնող ավտոճանապարհները, ինչպես նաև Վրաստանով անցնող երկաթուղին: Տարածաշրջանային հակամարտությունների պատճառով Ռուսաստանի, Իրանի, Թուրքիայի և Ադրբեջանի հետ կապող երկաթուղային ճանապարհների փակ լինելու և առկա գործող տրանսպորտային ենթակառուցվածքների, հատկապես Հայկական երկաթգծի ոչ բարվոք վիճակի արդյունքում արտաքին աշխարհի հետ հաղորդակցության տրանսպորտային ծախսերը չափազանց մեծ են:

Տրանսպորտային ենթակառուցվածքների զարգացման շրջանակներում Հայաստանը մասնակցում է «TRACECA» (TRANSPORT Corridor Europe-Caucasus-Asia) նախաձեռնությանը:

<sup>27</sup> Հայաստանի ֆինանսների վիճակագրությունը (2000-2004), ՀՀ ԱՎԾ:

<sup>28</sup> Հայաստանի ֆինանսների վիճակագրությունը (2000-2004), ՀՀ ԱՎԾ

<sup>29</sup> Հայաստանի ֆինանսների վիճակագրությունը (2000-2004), ՀՀ ԱՎԾ

<sup>30</sup> ԶՎԵԲ-ի «Անցումային զեկոլոյց 2005»:

<sup>31</sup> «Եվրոստատ» և լրացուցիչ հաշվարկներ:

1998թ. երկաթուղային պետական օպերատոր հանդիսացող «Հայկական երկաթգիծ» կազմակերպությունը վերակազմավորվեց մասնագիտացված երեք առանձին ընկերությունների, որի արդյունքում 2001-2002թթ. երկաթուղային փոխադրումները դարձան շահութաբեր: Այնուամենայնիվ, 2002թ. վերջին երեք ընկերությունները նորից միավորվեցին: Ներկայումս թե՛ երկաթգիծը, թե՛ շարժակազմը արդիականացման կարիք են գգում:

Ավիացիայի ոլորտի ենթակառուցվածքները ներառում են երեք օդանավակայաններ («Զվարթնոցն» ու «Էրեբունին»՝ Երևանում, «Շիրակը»՝ Գյումրիում): Վերանորոգման և վերակահավորման խնդիրների լուծման անհրաժեշտությունից ելնելով՝ 2002-ին «Զվարթնոց»-ը հանձնվեց կոնցեսիոն կառավարման «Acropuertos Americana» ընկերությանը:

Էներգետիկ հատվածը բնութագրվում է մի շարք խնդիրներով. ենթակառուցվածքների ոչ բարվոք վիճակ, անարդյունավետություն և կորուստների բարձր մակարդակ, ներդրումների պակաս և մեծ կախվածություն մեկ աղբյուրից (Ռուսաստանից), որտեղից ներմուծվում է ողջ միջուկային վառելիքը, գազը և նավթամթերքների զգալի բաժինը: Գազը ներմուծվում է Վրաստանի տարածքով անցնող միակ գազատարով: 2004-ին Հայաստանի և Իրանի միջև պայմանագիր կնքվեց մինչև 2007 թվականը նոր գազատարի կառուցման վերաբերյալ: Էլեկտրաէներգիայի 35-40 տոկոսն արտադրվում է Սեծամորի ԱԷԿ-ի 2-րդ բլոկի կողմից, որի՝ ընդունված միջազգային ստանդարտներին համապատասխանեցման աշխատանքների ֆինանսավորումը ԵՄ-ի գնահատմամբ տնտեսապես նպատակահարմար չէ: Էլեկտրաէներգիայի բաշխիչ ցանցերը մասնավորեցված են և պատկանում են Սիացյալ Թագավորությունում գրանցված «Midland Resources» հողինգին, որը «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության իրեն պատկանող 100 տոկոս բաժնետոմսերը կառավարման է հանձնել Ռուսաստանի Դաշնության ՌԱՌ «ԵԷՍ Ռոսսիի» բաց բաժնետիրական ընկերության հետ կապված «Ինտերէներգո Բի. Վի» ընկերությանը և բանակցություններ է վարում դրանց օտարման մասին, իսկ բարձր լարման ցանցերը մնում են պետական: Գազի ներմուծումը, տեղափոխումն ու բաշխումը կատարվում են «ՀայՌուսգազարդ» ընկերության կողմից, որի բաժնետոմսերի 45%-ը պատկանում է պետությանը, 45%-ը՝ ռուսական «Գազպրոմ»-ին, իսկ 10%-ը «Իտերա ինտերնեշնլ» ընկերությանը: Ծրագրեր կան էներգիայի վերականգնվող պաշարների և այլընտրանքային աղբյուրների զարգացման ուղղությամբ: Թեև հիմնական շեշտը դրվում է հիդրոէլեկտրակայանների վրա, հեռանկարներ կան նաև քամու, գեոթերմիկ և այլընտրանքային այլ աղբյուրներից ստացվող էլեկտրաէներգիայի արտադրության համար:

1997-ին «Արմենիա Տելեֆոն Կոմպանի» ընկերության (ԱրմենՏել) մասնավորեցմանն ու 15-ամյա ժամկետով ընկերությանը բացառիկ իրավունքների շնորհումից ի վեր հեռախոսակապի ոլորտի զարգացումը ցանկալի արագությամբ չի ընթանում: Միայն 2005թ. հուլիսի 1-ին բջջային հեռախոսակապի շուկա մուտք գործեց երկրորդ օպերատորը, որից հետո բջջային կապի սակագները էապես իջան: Կապի ծառայության որակը, մասնավորապես՝ բջջային, դեռևս բարելավման կարիք ունի: «ԱրմենՏել»-ի կողմից մատուցվող կապի ծառայությունների ցածր որակի հետևանքով տուժում է ՀՀ-ում ինտերնետ կապի համակարգի զարգացումը: Կապի ոլորտի համեմատությամբ հեռահաղորդակցության համակարգը առավել զարգացած է: Ներկայումս Հայաստանում գործում են մեկ պետական և բազմաթիվ մասնավոր հեռուստաընկերություններ և ռադիոկայաններ:

### **2.2.3. Արտաքին տնտեսական հարաբերությունները**

#### **Արտաքին պարտքը**

Ազատական արտաքին հետևողական տնտեսական քաղաքականության հետևանքով 2003թ. սկզբին Հայաստանը դարձել է ԱՀԿ-ի լիիրավ անդամ: Արտաքին առևտրի, կապիտալի շարժի և ֆինանսական հոսքերի նկատմամբ սահմանափակումներ չեն կիրառվում: 1999-2005թթ. ողջ ժամանակահատվածում ընդհանուր արտաքին պարտքը արտահանման ծավալների նկատմամբ կրճատման միտումներ է դրսևորել՝ 219.4%-ից հասնելով 83%-ի: 2005թ. վերջի դրությամբ պետական պարտքը (ներքին և արտաքին) կազմել էր ՀՆԱ-ի 24.9%-ը, որից ներքին պարտքը՝ 2.3%, իսկ արտաքինը՝ 22.6%, որը (արտաքին պարտքը) համապատասխանում է ԵԴՄ<sup>32</sup> (EMU) Մասստրիխտի հայտանիշների պահանջներին (ՀՆԱ-ի 60 տոկոսից ոչ ավել):

<sup>32</sup> Եվրոպական Դրամական Միություն (European Monetary Union)

Պետական պարտք/ՀՆԱ հարաբերակցության ներկայիս ցուցանիշները ավելի բարենպաստ են, քան ԱՀՌԾ կանխատեսումները (2004թ. համար ԱՀՌԾ կանխատեսված հարաբերակցությունը կազմել է 43%, իսկ 2004թ. փաստացի ցուցանիշը համապատասխանում է 2008թ. համար կանխատեսված ցուցանիշի արժեքին), նույն միտումը շարունակվել է նաև 2005թ. ընթացքում: Հաշվի առնելով ՀՆԱ-ի աճի կանխատեսվածից ավելի բարձր տեմպերը, որոնք բարձր հավանականությամբ կպահպանվեն նաև հետագա մի քանի տարիների ընթացքում, պարտքային բեռը էականորեն կկրճատվի նաև միջնաժամկետ հեռանկարում:

1999-2005թթ. պահպանվել է Հայաստանի արտաքին պարտքի կառուցվածքում ԵՄ-ի և ՉՎԵԲ-ի բաժնի կրճատման միտումը: 2005թ. ԵՄ-ի և ՉՎԵԲ-ի բաժինները արտաքին պարտքի կառուցվածքում կազմեցին համապատասխանաբար 0% և 1.3%՝ 1999-ի 2.75% և 4.46%-ի փոխարեն: Ապագայում այս ցուցանիշը կաճի ի հաշիվ ԵՀՔ շրջանակներում ԵՄ-ի կողմից նոր ծրագրերի ֆինանսավորման, ինչպես նաև Եվրոպական ներդրումային բանկի (EIB) Հայաստանում սպասվելիք գործունեության սկսվելու հաշվին:

### **Ընթացիկ հաշվի հաշվեկշիռը**

1999-2004թթ. ողջ ժամանակահատվածում ընթացիկ հաշվի պակասուրդը կրճատման միտումներ է դրսևորել: 1999-2005թթ. ընթացքում այն ՀՆԱ-ի նկատմամբ 16.6%-ից իջավ 4.19%-ի: Նույն միտումը նկատվում էր արտաքին առևտրային հաշվեկշռի շարժում, որը 1999-ի՝ ՀՆԱ-ի նկատմամբ 29%-անոց մակարդակից 2005-ին հասավ 16.8%-ի: Հայաստանի արտահանման կառուցվածքում գերակշռում են թանկարժեք և կիսաթանկարժեք քարերի, մետաղների և դրանցից պատրաստված իրերի, ոչ թանկարժեք մետաղների և դրանցից պատրաստված իրերի, հանքահումքային արտադրանքի, պատրաստի սննդի և մանածագործական իրերի արտահանումը, որը 2005-ին արտահանման ընդհանուր ծավալում կազմեց 91.0%: 1999-2005թթ. հատկապես արագ տեմպերով<sup>33</sup> աճում էին թանկարժեք և կիսաթանկարժեք քարերի, մետաղների և դրանցից պատրաստված իրերի (22.4%), սարքերի և ապարատների (20.1%), պատրաստի սննդի արտադրանքի (34.7%), հանքահումքային արտադրանքի (12.4%), ոչ թանկարժեք մետաղների և դրանցից պատրաստված իրերի (52.6%), քարից, գիպսից, ցեմենտից պատրաստված իրերի (38.3%), մանածագործական իրերի (18.0%), թղթի և թղթից պատրաստված իրերի (24.5%), տրանսպորտի միջոցների (25.2%) և կաուչուկի, ռետինե և պլաստմասսայից պատրաստված իրերի (-0.5%) արտահանման ծավալները: Սակայն, չնայած որոշակի ընդլայնմանը, վերջին տարիներին Հայաստանի արտահանման անվանացանկը մնում է շատ սահմանափակ, իսկ կենտրոնացման աստիճանը<sup>34</sup> շատ բարձր, որը երկրի արտահանումը դարձնում է չափազանց զգայուն արտաքին ազդեցությունների նկատմամբ: Այդ առումով արտահանվող արտադրանքի անվանացանկի ընդլայնումը և կենտրոնացման աստիճանի նվազեցումը շարունակում է մնալ երկրի տնտեսական քաղաքականության հիմնական գերակայություններից մեկը:

### **Կապիտալի հաշիվ և ՕՌՆ**

ՕՌՆ-երի ամենամեծ ներհոսքը գրանցվել է 1998-ին՝ 206.5 մլն եվրո, որը կապված էր «ԱրմենՏել»-ի մասնավորեցման արդյունքում ներդրումների ներհոսքով: ՕՌՆ-երի զուտ ներհոսքը այդ տարի կազմել է 196.3 մլն եվրո, որից հետո 1999-2005թթ. միջինում կազմել է 124.1 մլն եվրո՝ ՀՆԱ-ի նկատմամբ մոտ 4.9%: 1999-2005թթ. ՕՌՆ-երի զուտարային զուտ ներհոսքը Հայաստան կազմել է 868.9 մլն եվրո: 2005-ին դրանց զուտ ներհոսքը Հայաստան հասել է 2000-2005թթ. առավելագույն մակարդակին՝ 217.1 մլն եվրո կամ 5.55% ՀՆԱ-ի նկատմամբ: Արժեթղթերի շուկայի անբավարար զարգացման, կորպորատիվ կառավարման ինստիտուտի կայացման և բաժնետերերի շահերի պաշտպանության չլուծված խնդիրների պատճառով օտարերկրյա պորտֆելային ներդրումների (ՕՊՆ) թե՛ ներհոսքի, թե՛ արտահոսքի ծավալները չափազանց փոքր են, իսկ հաշվեկշիռը, որպես կանոն, բացասական: 1999-2005թթ. ընթացքում ՀՀ-ից ՕՊՆ զուտ արտահոսքը կազմել է 27.8 մլն եվրո:

<sup>33</sup> Հավելաճին համապատասխան՝ միջին տարեկան տեմպերը բերված են փակագծերում:

<sup>34</sup> 1994-2004թթ. ընթացքում Հայաստանի արտահանման կենտրոնացման գործակիցը (հաշվարկված արտաքին տնտեսական գործունեության ապրանքների անվանացանկի երկնիշ խմբերի կտրվածքով) 1999-2004թթ. ըստ էության մնացել է անփոփոխ՝ կազմելով 2004թ. 0,303՝ 1999թ. 0,302-ի համեմատ:

## **Տնտեսական համագործակցությունը Եվրամիության հետ**

Անկախացումից ի վեր ԱՊՀ անդամ պետությունների հետ արտաքին ապրանքաշրջանառության բաժինը, Հայաստանի արտաքին ապրանքաշրջանառության ընդհանուր ծավալում կրճատման միտումներ դրսևորելով, 2005-ին կազմեց 18.4%: Ազատական արտաքին տնտեսական քաղաքականության հետևանքով նոր առևտրատնտեսական կապեր հաստատվեցին այլ երկրների հետ:

1995-ից ի վեր Հայաստանի արտաքին ապրանքաշրջանառության մեջ հաստատուն կերպով աճել է ԵՄ-ի բաժինը՝ 1994-ի 11.9%-ից 2005-ին հասնելով 34.8.0%-ի: 2005-ի արդյունքներով ՀՀ արտահանման և ներմուծման ծավալներում ԵՄ-ի բաժինը համապատասխանաբար կազմում էր 46.6% և 28.5%: 1999-2005թթ. ԱՄՆ-ի, Իրանի և Թուրքիայի հետ ապրանքների արտահանման և ներմուծման տեսակարար կշիռները կրճատվել են, իսկ Իսրայելի, Շվեյցարիայի և Չինաստանի՝ աճել: Արձանագրված միտումները փաստում են, որ Հայաստանի տնտեսական կապերը քայլ առ քայլ ուղղվում են դեպի ԵՄ: ԵՄ-ի շուկա հայկական արտադրանքի մուտքը խրախուսող գործոնների շարքում էական դեր ունի ԵՄ արտոնությունների ընդհանրացված համակարգը, որի ներքո արտադրանքի արտահանման տեսակարար կշիռը, 2001-ից սկսած, աստիճանաբար աճում է: ԵՀԶ-ում Հայաստանի ընդգրկումը լուրջ հեռանկարներ է ստեղծում հայ-եվրոպական տնտեսական համագործակցության հետագա խորացման համար: ԵՄ հակադեմպինգային օրենսդրության շրջանակներում Հայաստանին «գործող շուկայական տնտեսության» կարգավիճակի շնորհման դեպքում ԵՄ-ի հետ Հայաստանի տնտեսության հետագա ինտեգրման համար էլ ավելի նպաստավոր պայմաններ կստեղծվեն: ԱՃ շրջանակներում ՀՀ կառավարությունը նպատակ ունի 2006-2008թթ. տնտեսական նախադրյալներ ստեղծել ԵՄ-ի հետ ազատ առևտրի համաձայնագրի կնքման համար:

### **2.3.Ծրագրում օգտագործվող տնտեսական ցուցանիշների կանխատեսումները**

Ծրագրում օգտագործվող ցուցանիշների միջնաժամկետ և երկարաժամկետ կանխատեսումները հիմնված են 2003-ի օգոստոսին ՀՀ կառավարության կողմից հաստատված ԱՀՌԾ-ի կանխատեսումների, 2005-2007թթ. պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի (ՊՄԾԾ), ինչպես նաև ԱՀՌԾ իրականացման առաջընթացի առաջին հաշվետվության (2004թ.) վրա: 2004թ. հունվարին ՀՀ կառավարությունը հաստատել է նաև ԱՀՌԾ կատարումն ապահովող 2004-2006թթ. միջոցառումների ցանկը՝ սահմանելով միջոցառումների իրականացման ընթացքի վերաբերյալ ըստ եռամսյակների պետական կառավարման մարմինների կողմից տեղեկատվության ներկայացման մեխանիզմը:

2003-2005թթ. տնտեսական արդյունքները մի շարք ցուցանիշներով գերազանցեցին ԱՀՌԾ կանխատեսումները: Մասնավորապես, տնտեսությունն աճել է ԱՀՌԾ սցենարով ծրագրվածից կրկնակի ավելի արագ տեմպերով: Հետևաբար նախատեսվածից ավելի բարձր արդյունքներ գրանցվեցին նաև աղքատության մակարդակի կրճատման ուղղությամբ: 2003-2005թթ. գրանցված արդյունքները հաշվի առնելու դեպքում, և եթե հետագա զարգացումը համապատասխանի ԱՀՌԾ կանխատեսումներին, արդեն 2008թ. հնարավոր կլինի հասնել 2012թ. համար ծրագրավորված աղքատության կրճատման նպատակներին:

ԱՀՌԾ կանխատեսումները, բացի նյութական և մարդկային աղքատության ցուցանիշներից, ծրագրային մակարդակներ են նախատեսում նաև սոցիալ-տնտեսական զարգացման բազմաթիվ այլ ցուցանիշների համար: Այդ ցուցանիշների ծրագրային կանխատեսումները բերված են աղյուսակ 3-ում:

Աղյուսակ 3. ՀՀ կառուցվածքային բարեփոխումների և սոցիալ-տնտեսական զարգացման առանձին ցուցանիշների կանխատեսումներն ԱՀՌԾ շրջանակներում\*

Ցուցանիշը	ԱՀՌԾ կանխ.			Փաստ.	Ճշգրտված կանխատեսումներ	
	2004թ.	2008թ.	2015թ.	2004թ.	2008թ.	2015թ.
Մասնավոր հատվածի բաժինը ՀՆԱ-ում (%) <sup>35</sup>	73.0	76.2	80.0	75.0	78.3	82.2
Առևտրի և արժույթային համակարգի ազատականացման համաթիվ (1-4.3 միավոր)	4.3	4.3	4.3	4.3	4.3	4.3
Հակամենաշնորհային քաղաքականության համաթիվ (1-4.3 միավոր)	2.2	2.3	3.0	2.0	2.3	3.0
Բանկային համակարգի բարեփոխման համաթիվ (1-4.3 միավոր)	2.6	3.0	4.0	2.5	3.0	4.0
Ֆինանսական ոչ բանկային ինստիտուտների բարեփոխման համաթիվ (1-4.3 միավոր)	2.1	3.0	3.7	2.0	3.0	3.7
Ենթակառուցվածքների բարեփոխման համաթիվ (1-4.3 միավոր)	2.4	3.0	3.7	2.5	3.0	3.7
ՀՆԱ մեկ շնչի հաշվով, ԱՄՆ դոլար	904.2**	1142.0	1629	1259.8 (2005)	1826.6	2683
Գնաճի տեմպը (ՄԳԻ, %)	3.0	3.0	3.0	0.6 (2005)	3.0	3.0
Պետական բյուջեի հաշվեկշիռ/ ՀՆԱ (%)	-2.6	-2.0	-1.6	0.17	-2.0	-1.6
Համախառն կուտակում/ ՀՆԱ (%)	20.6	21.9	24.3	23.9	25.4	28.2
Պետական բյուջեի ծախսեր/ ՀՆԱ (%)	20.4	20.8	21.4	17.3	20.0	21.4
Արտահանում/ ՀՆԱ (%)	30.7	31.9	34.6	27.7	31.9	34.6
Արդյունաբերություն (ներառ. շինարարություն)/ ՀՆԱ (%)	40.2	43.2	47.2	34.5 (2005)	43.2	47.2
Ընդհանուր արտաքին պարտք/ ՀՆԱ (%)	43.0	33.6	29.3	22.6 (2005)	17.7	15.5

Աղբյուրը. ԱՀՌԾ, ԶՎԵԲ-ի «Անցումային զեկույց 2004», «Համաշխարհային զարգացման ցուցանիշներ» տվյալների բազան (ՀԲ) և լրացուցիչ հաշվարկներ

\* Աղյուսակում բերված որոշ ցուցանիշների որակական գնահատականները (1-4.33 բալային համակարգով) հիմնված են ԶՎԵԲ-ի տարեկան անցումային զեկույցներում օգտագործվող մեթոդաբանության վրա:

\*\* ՀՆԱ մեկ շնչի գնահատականները արտահայտված են 2004թ. ԱՄՆ դոլարներով և ամփոփոխ բնակչության քանակի ենթադրությամբ (որն ընդունված էր մաս ԱՀՌԾ կանխատեսումներով և համապատասխանում է բնակչության քանակի պաշտոնական տեղեկատվությանը 2003-2004թթ. համար): ՀՆԱ մեկ շնչի ճշգրտված գնահատականները ստացվել են ԱՀՌԾ կանխատեսված աճի տեմպերի տեղաշարժով 2006թ. սկսված՝ որպես 2006թ. աճի կանխատեսումները վերցվել են ԱՀՌԾ 2003թ.կանխատեսումները, 2007թ. համար՝ 2004թ. կանխատեսումները և այդպես բոլոր հաջորդ տարիների համար:

<sup>35</sup> ԵԶՎԲ-ի կողմից կիրառվող մեփոդաբանության համաձայն

ԱՀՌԾ իրականացումը ոչ բոլոր ուղղություններով է ընթացել կանխատեսված տեմպերով, մասնավորապես՝ 2004-2005թթ. ՀՆԱ-ի համեմատ արածանագրվել է արտահանման հավելաճի համեմատաբար ցածր տեմպ, որի հետևանքով արտահանում/ՀՆԱ հարաբերակցությունը նվազել է: Սա մասամբ պայմանավորված է 2004-2005թթ. ընթացքում դոլարի և եվրոյի նկատմամբ ՀՀ դրամի շարունակական արժեքավորմամբ: Այնուամենայնիվ, ՀՀ կառավարությունը ծրագրում է արտահանման հարաբերական ծավալների աստիճանական աճ և ներմուծման կրճատում մինչև 2015-ը համաձայն ԱՀՌԾ սցենարի: 2002-2004թթ. պետական բյուջեի ծախսեր /ՀՆԱ հարաբերակցությունը նույնպես շեղվում է նախանշված ծրագրից: Սպասվածից դանդաղ են ընթացել բարեփոխումները ենթակառուցվածքների, հակամենաշնորհային քաղաքականության և ֆինանսական հատվածի բարեփոխման ուղղություններով: Նշված ուղղություններով իրավիճակի շտկումը և վերադարձը ԱՀՌԾ նախատեսված հետանիշին հանդիսանում է տնտեսական քաղաքականության հիմնական գերակայություններից մեկը:

#### **2.4. Իրավիճակի գնահատականը Կոպենհագենյան չափանիշների համակարգի շրջանակներում**

ԱՄ այս մասի մեթոդաբանության հիմքում դրված են Կոպենհագենյան տնտեսական չափանիշները: Հայաստանի ներառումը ԵՀԶ-ում<sup>36</sup> առավել տեղին է դարձնում նման մոտեցումը, քանի որ 1993-ին ձևակերպված ԵՄ անդամակցության Կոպենհագենյան քաղաքական և տնտեսական չափանիշներն արտացոլում են այն ընդհանուր արժեքները, որոնք ընկած են ԵՀԶ շրջանակներում ԵՄ-ի և հարևան երկրների հարաբերությունների հիմքում:

Կոպենհագենյան տնտեսական չափանիշները օգտագործվում են տնտեսության ոլորտում Հայաստանի և ԵՄ-ի միջև ներկա և ԱՀՌԾ սցենարով ուրվագծված ապագա վիճակի տարբերությունների գնահատման նպատակով:

##### **2.4.1. Գործող շուկայական տնտեսության առկայություն**

Համաձայն Կոպենհագենյան տնտեսական չափանիշների՝ գործող շուկայական տնտեսության առկայությունը ենթադրում է, որ գնագոյացումն ու արտաքին առևտուրը պետք է ազատականացված լինեն և ձևավորված լինի հարկադրելի իրավական համակարգ, մասնավորապես՝ սեփականության իրավունքների արդյունավետ պաշտպանության: Անհրաժեշտ պայման է մակրոտնտեսական կայունությունն ու տնտեսական քաղաքականության ոլորտում հասարակական լայն կոնսենսուսի առկայությունը, որոնք նպաստում են շուկայական տնտեսության աշխատանքին: Չարգասած ֆինանսական համակարգի առկայությունն ու շուկա մտնելու և շուկայից դուրս գալու էական խոչընդոտների բացակայությունը բնութագրում են տնտեսության արդյունավետությունը:

*ՀՀ կառավարությունը նպատակ է հետապնդում 2006-2015թթ. ժամանակահատվածում պահպանել տնտեսական աճի բարձր տեմպերը՝ առնվազն ԱՀՌԾ-ով նախանշված մակարդակի վրա: 2003-2005թթ. տնտեսական արդյունքներից պարզ է դառնում, որ շինարարության ոլորտի արագացված աճի իմպուլսը հաղորդվում է նաև տնտեսության մյուս ճյուղերին, ինչը հերքում է այդ աճի կարճաժամկետ բնույթի վարկածը: Հետագա տնտեսական աճի ապահովման լրացուցիչ խթան կլինի, մասնավորապես, ՀՀ կառավարության կողմից «Հազարամյակի մարտահրավերների» հիմնադրամի արդեն իսկ հաստատված շուրջ 236 մլն ԱՄՆ դոլարի ֆինանսական օժանդակության ծավալները, որոնք նախատեսված է իրականացնել 2006-2010թթ. ընթացքում, 60 մլն. դոլար ծավալով Լինսի հիմնադրամի նոր ծրագիրը, ինչպես նաև անդամակցությունը Ասիական զարգացման բանկին 2005թ. սկսած: ԱՀՌԾ իրականացման ներկայիս արդյունքներով (ենթադրելով, որ հետագա տնտեսական աճը կշարունակվի ԱՀՌԾ-ով ծրագրված տեմպերով) 2015-ին ՀՆԱ-ն մեկ շնչի հաշվով կկազմի 2683 ԱՄՆ դոլար՝ ծրագրված 1629 ԱՄՆ դոլարի փոխարեն<sup>37</sup>:*

*Կպահպանվի 1999թ. ի վեր ընթացիկ հաշվի պակասուրդի կրճատման միտումը: 1999-ի 287.3 մլն եվրոյի մակարդակից 2005-ին այն իջավ 163.9 միլիոնի: 1999-2005թթ. արտաքին առևտրային պակասուրդը ՀՆԱ-ի համեմատ կրճատվեց շուրջ 4 անգամ՝ հասնելով 8.2%-ի 30.8%-համեմատ: ԱՀՌԾ սցենարով նախատեսվում է արտահանման հարաբերական*

<sup>36</sup> Commission Communication of 12 May 2004, 'European Neighbourhood Policy: Strategy Paper' Com(2004)373 final; European Parliament Report on the Wider Europe, A5-0378/2003, at para 8; resolution of the European Parliament of 26 February 2004 on 'EU Policy towards the South Caucasus'.

<sup>37</sup> 2005թ. համադրելի գներով

ծավալների շարունակական աճ և ներմուծման կրճատում մինչև 2015թ., որի արդյունքում այս ցուցանիշը կիջնի մինչև 5%-ի: Արտահանման ծավալները 2015թ. ՀՆԱ-ի նկատմամբ կկազմեն 31.2% 2005-ի 19.5% համեմատ:

*Կկայունացվի և հետագայում կսպահովվի զբաղվածության աճը:* ՀՀ կառավարությունը զբաղվածության խնդրի լուծումը տեսնում է ինչպես բարձր տեմպերով հետագա տնտեսական աճի ապահովման, այնպես էլ փոքր և միջին ձեռնարկությունների և ինքնազբաղվածության խթանման միջոցով:

*Գնաճի տարեկան տեմպերը կպահպանվի 3%-անոց մակարդակի վրա:* Չնայած այս մակարդակի շուրջ հնարավոր տատանումներին՝ 1999-2005թթ. թե՛ ժամանակահատվածի միջին, թե՛ ժամանակահատվածի վերջին գներով ՍԳԻ-ի տարեկան հավելաճը չի հասել երկնիշ մակարդակի՝ 2005-ին կազմելով համապատասխանաբար -0.2% և 0.6%: Նախատեսվում է, որ հետագայում ԿԲ-ին կհաջողվի ապահովել գնաճի ծրագրված մակարդակը 2006թ. հունվարից որդեգրած նոր՝ գնաճի նպատակադրման ռազմավարության ներքո:

*Կսպահովվի տոկոսադրույքների շարունակական նվազումը:* 1999-2005թթ. ժամանակահատվածում բանկային վարկի տոկոսադրույքի կրճատումը համեմատաբար մեծ էր ազգային արժույթով տրվող վարկերի դեպքում: 2005-ի սեպտեմբերի դրությամբ մեկ տարուց երկար ժամկետով տրվող ազգային արժույթով և արտարժույթով վարկերի տոկոսադրույքները համապատասխանաբար կազմեցին 18.3% և 17.6%: Ի հակադրություն տոկոսադրույքի կրճատման աստիճանական միտումների՝ ՊԿՊ-ների եկամտաբերությունը կտրուկ անկում գրանցեց՝ 2000-2005թթ. ընթացքում 24.9%-ից ընկնելով 7.9%-անոց մակարդակի վրա, որը տնտեսական զարգացման և երկրի ռիսկի կրճատման արդյունք էր: Վերջերս ներդրված ավանդների ապահովագրության համակարգի զարգացումը կնպաստի բանկային համակարգ բնակչության և կազմակերպությունների միջոցների հոսքի ավելացմանը՝ համապատասխանաբար ավելացնելով բանկային վարկավորման բացարձակ և հարաբերական ծավալները:

*Կպահպանվի համախմբված բյուջեի պակասորդի կրճատման միտումը:* 1999-2005թթ. բյուջեի պակասորդը 5.4%-ից հասավ 1.82%-ի: Սակայն հարկային համակարգը դեռևս բնութագրվում է բարձր գործարքային ծախսերով և արդյունավետության հետագա բարձրացման կարիք ունի: Հարկերի հավաքման արդյունավետության բարձրացման հաշվին ՀՀ կառավարությունը նախատեսում է առավել արդյունավետ քաղաքական և տնտեսական ինստիտուտներ կառուցել:

*Կպահպանվի տնտեսության կարգավորման ուղղությամբ որդեգրված ազատական մոտեցումը:* Տնտեսության ազատականացման աստիճանով Հայաստանն այժմ համադրելի է արդյունաբերական զարգացած երկրների հետ:

*Պայմաններ կստեղծվեն մասնավոր հատվածի հետագա զարգացման համար:* Տնտեսության մասնավոր հատվածի ձևավորմանն ուղղված բարեփոխումները Հայաստանում նույնպես արդյունավետ ընթացք են ունեցել: 2004-ին ՀՀ ՀՆԱ-ի 75%-ն արտադրվել է մասնավոր հատվածում: ԱՀՌ-Ծ շրջանակներում ՀՀ կառավարությունը ծրագրում է, որ 2015թ. մասնավոր հատվածում կարտադրվի ՀՆԱ-ի մոտ 80%-ը:

*Հիմնականում կավարտվի մասնավորեցման գործընթացը:* Ներկայումս մասնավորեցման գործընթացները Հայաստանի Հանրապետությունում ավարտական փուլում են: Այս ոլորտում հետագա անելիքները ներառում են հետմասնավորեցման հսկողությունն ու պետական գույքի օգտագործման կառավարումը: Կախված պետական գույքի նշանակությունից՝ դրա նկատմամբ սահմանվում են տարբեր գերակայություններ: Թեև որոշ սոցիալական բնույթի խնդիրներ դեռևս լիարժեք լուծում չեն գտել, ՀՀ կառավարության գնահատմամբ մասնավորեցումը ծառայել է իր հիմնական նպատակին՝ բազմաձև սեփականության հարաբերությունների զարգացմանը:

*Կշարունակվեն բարեփոխումները բանկային հատվածում:* Հայաստանի կենտրոնական բանկը փորձում է խթանել բանկային համակարգի համակենտրոնացումը: Ներկայումս համակարգում գործում են շուրջ 21 բանկեր: 2005-ի հուլիսին ուժի մեջ մտած ավանդների ապահովագրության համակարգը արդեն իսկ նպաստում է համակարգի նկատմամբ բնակչության վստահության բարձրացմանը, ոլորտի հակամենաշնորհային

քաղաքականությանը, ավանդների և վարկի տոկոսադրույքների միջև տարբերության ու տոկոսադրույքների հետագա կրճատմանը, որի հետևանքով երկարաժամկետ բանկային ֆինանսավորումը ավելի մատչելի կդառնա բիզնեսի համար<sup>38</sup>: ԱՀՌԾ-ի շրջանակներում ՀՀ կառավարությունը նախատեսում է բանկային վերահսկողության և կարգավորման նորմերը էականորեն համապատասխանեցնել Բազելյան նոր ստանդարտներին և ունենալ արդյունավետ բանկային համակարգ, որը կբնութագրվի շուկայի մասնակիցների միջև իրական մրցակցության առկայությամբ (4 միավոր՝ ըստ ԵԶՎԲ-ի անցումային երկրներում բարեփոխումների դասակարգման սանդղակի):

*Կշարունակվի և կուժեղացվի մենաշնորհների դեմ ուղղված պայքարը:* Ոլորտի հետագա բարեփոխումը մեծապես կախված է հակակոռուպցիոն քաղաքականության և օրենքի իշխանության՝ երկու կարևորագույն քաղաքական չափանիշների գծով բարեփոխումների հաջող ընթացքից: 2004-ին ԶՎԵԲ-ի կողմից հակամենաշնորհային քաղաքականության համաթիվը Հայաստանի համար գնահատվել է 2 միավոր<sup>39</sup>, որ բարեփոխումների իմաստով նշանակում է հակամենաշնորհային օրենսդրության ընդունում, հակամենաշնորհային մարմինների ստեղծում, շուկայի նոր մասնակիցների ձևավորման մի շարք սահմանափակումների վերացում, մենաշնորհային դիրք ունեցող ընկերությունների նկատմամբ որոշ հարկադիր միջոցների ձեռնարկում: ԱՀՌԾ-ով նախատեսվում է 2015-ին հասնել 3 միավորի մակարդակի՝ շուկայի նոր մասնակիցների ձևավորման հիմնական սահմանափակումների վերացում և առանձին մենաշնորհային ձեռնարկությունների մասնատում: 2004-ի արդյունքներով այս ուղղությամբ Հայաստանը հետ է մնում ԱՀՌԾ սցենարից:

*Աշխատանքներ կտարվեն մշակված արդիական օրենսդրության կատարման և հարկադրման արդյունավետության բարձրացման ուղղությամբ:* Օրենքի իշխանության համաթիվը Հայաստանը 2004-ի դրությամբ գտնվում է ԵՄ-ի միջինի համեմատ 49%-անոց մակարդակի վրա: Համակարգի բարեփոխմանն ուղղված ծրագրերի շարքում առանցքային տեղ է զբաղեցնում Համաշխարհային բանկի հետ համատեղ իրականացվող դատաիրավական համակարգի բարեփոխման ծրագիրը: Համակարգի բարեփոխումը մասնավորապես մեծ նշանակություն ունի սեփականության իրավունքների պաշտպանության համատեքստում:

*Կխթանվի արժեթղթերի շուկայի և ոչ բանկային ֆինանսական ինստիտուտների զարգացումը, որը ներկայումս հետ է մնում բանկային համակարգի համեմատ:* Ոլորտի զարգացումը ժամանակ է պահանջում: Ներկայումս բարեփոխումներն այստեղ հետ են մնում ԱՀՌԾ ծրագրից, որով նախատեսվում էր ապահովել մասնավոր ընկերությունների բաժնետոմսերի մեծածավալ թողարկումներ, փոքրամասնություն կազմող բաժնետերերի շահերի որոշակի պաշտպանություն, շուկայի լիկվիդայնության բարձրացում և առաջընթաց՝ համակարգի իրավական կարգավորման օրենսդրությունը՝ միջազգային ստանդարտներին համապատասխանեցնելու ուղղությամբ:

**2.4.2. ԵՀԶ շրջանակներում արդյունավետ տնտեսական համագործակցության և շուկայական մրցակցությանը դիմակայելու ներուժը**

Այս չափանիշներին համապատասխանությունը ենթադրում է շուկայական տնտեսության և կայուն մակրոտնտեսական համակարգի առկայություն, որոնք տնտեսավարողներին հնարավորություն են տալիս որոշումներ կայացնել նվազագույն անորոշության պայմաններում: Մեկ այլ պահանջ է մարդկային և ֆիզիկական կապիտալի ու զարգացած ենթակառուցվածքի առկայությունը: Թեև ընկերությունների համար արտաքին ֆինանսավորման հասանելիությունը նույնպես կարևոր գործոն է Եվրամիության հետ համագործակցության շրջանակներում տնտեսության մրցունակության գնահատման համար, ամենակարևորն այս իմաստով Եվրամիության հետ տնտեսական ինտեգրացման փաստացի մակարդակն է և առևտրի կառուցվածքը:

*Անկախացումից հետո Հայաստանը վերափոխվեց շուկայական տնտեսության՝ ձևավորելով հիմնական շուկայական ինստիտուտներն ու տնտեսության մասնավոր հատվածը:* Մակրոտնտեսական կայունացումը տեղի ունեցավ ազգային արժույթի ներդրումից երկու տարի անց (1995թ.): Տնտեսական քաղաքականությունն ուղղված էր ազատական շուկայական

<sup>38</sup> Վերջին երկու տարվա ընթացքում նկատվում է բանկային ոլորտի էական աշխուժացում: Մասնավորապես տնտեսության ներքին վարկավորման ծավալները 2005 վերջի դրությամբ կազմել են ՀՆԱ 8.7 տոկոս, համեմատ 2004թ. 7.56 եւ 2003թ. 6.6 տոկոսի հետ:  
<sup>39</sup> ԶՎԵԲ-ի «Անցումային զեկույց 2004»:



տնտեսության ձևավորմանը: Մակրոտնտեսական և գների կայունության, հանրային պարտքի և ֆիսկալ դեֆիցիտի մակարդակով Հայաստանը կարելի է համեմատել Եվրամիությանը անդամակցած այլ երկրների, ինչպես նաև Ռուսաստանի (որին Եվրոպական հանձնաժողովը 2002թ. նոյեմբերին շնորհեց Շուկայական տնտեսության կարգավիճակ (ՇՏԿ), և հանդիսանում է վճարային հաշվեկշռի մշտական ավելցուկ ունեցող երկիր) և Վազախստանի հետ, որին 2002թ. մարտին ՇՏԿ շնորհեց ԱՄՆ Առևտրի դեպարտամենտը: Այս ցուցանիշների մի մասով Հայաստանը բավարարում է Մասստրիխտի փոխարկելիության ցուցանիշներին, մասնավորապես, ՀՆԱ-ի նկատմամբ պետական պարտքի, ազգային արժույթի փոխարժեքի կայունության և պետական բյուջեի հաշվեկշռի ցուցանիշներով:

*Կիսբանվի ԵՄ հետ խորացող տնտեսական համագործակցության շրջանակներում մրցակցությանն ու շուկայի ուժերին դիմակայելու համար մեծ նշանակություն ունեցող մարդկային և ֆիզիկական կապիտալի զարգացումը:* Հայ ժողովուրդն ունի կրթական բարձր մակարդակ և հակվածություն դեպի գիտելիքների պաշարի շարունակական մեծացումը: Կրթության և գիտության ոլորտում պետական ծախսերն ԱՀՌԾ-ով ծրագրվում է 2015 թ. հասցնել ՀՆԱ-ի մեջ 4.3%-ի:

*Տնտեսական աճը կծառայի աշխատաշուկայի բարեփոխման նպատակին:* Աշխատաշուկայի խնդիրները մասամբ պայմանավորված են այն իրողությամբ, որ ներկայումս տնտեսության մեջ կոնկրետ մասնագետների պահանջի և կրթական հաստատությունների կողմից դրանց պատրաստման միջև կապը շատ շույլ է: Մասնագետների պահանջարկին համապատասխան մասնագիտական կադրերի պատրաստումը, ԱՀՌԾ իրագործման շրջանակներում հիմնականում փոքր և միջին ձեռնարկությունների ոլորտի զարգացման հաշվին նոր աշխատատեղերի ստեղծման և ինքնազբաղվածության ու ձեռներեցության համար լրացուցիչ հնարավորությունների ստեղծման հետ մեկտեղ, թույլ կտա քայլ առ քայլ անցում կատարել ներկայիս “առանց զբաղվածության ավելացման” տնտեսական աճի իրավիճակից զբաղվածությունը ավելացնող տնտեսական աճին:

*Մասնավոր հատվածի տեսակարար կշիռը տնտեսության մեջ այսօր արդեն գերազանցում է ԱՀՌԾ կանխատեսումները:* 2004-ին մասնավոր հատվածի բաժինը ՀՆԱ-ում կազմեց 75%՝ ծրագրված 73%-ի փոխարեն: 2015-ին այս ցուցանիշը կհասնի 80-82%-ի: Աստիճանաբար սկսում է ձևավորվել սեփականատերերի միջին խավը: Այնուամենայնիվ, ԵՄ արտահանվող արտադրանքի մեջ առյուծի բաժինը պատկանում է թանկարժեք քարերի վերաարտահանմանը և արդյունահանող արդյունաբերության ճյուղին: ԵՀՔ շրջանակներում արդյունավետ համագործակցությանն ուղղված տնտեսական քաղաքականության կարևոր նպատակ է՝ ԵՄ արտահանման կառուցվածքում վերամշակող արդյունաբերության և առաջավոր տեխնոլոգիաների ճյուղերի արտադրանքի բաժնի մեծացումը, որի համար միջոցառումներ են նախատեսվում արտադրանքի որակի կառավարման և մարքեթինգի ուղղությամբ:

*Կխորացվեն տնտեսական հարաբերությունները ԵՄ-ի հետ:* Հայաստանի արտաքին առևտուրը Եվրամիության հետ անկախացումից ի վեր աճի կայուն միտումներ է դրսևորել: Արդյունքում այսօր ԵՄ-ն Հայաստանի գլխավոր տնտեսական գործընկերն է: ԳՀՀ կնքումը և հատկապես ԵՀՔ մեջ Հայաստանի ներառումը միանգամայն նոր հեռանկարներ են բացել Եվրամիության հետ տնտեսական հետագա ինտեգրման համար:

*Ազգային դրամը կմնա կայուն:* 2000-2003թթ. ազգային արժույթի իրական արդյունավետ փոխարժեքը աստիճանական նվազման միտումներ էր դրսևորում, որոնք պահպանվեցին մինչև 2004թ. առաջին եռամսյակը: Սակայն 2004թ. երկրորդ քառորդից սկսած ՀՀ դրամի արժեքավորման կայուն միտում արձանագրվեց: Այնուամենայնիվ, ազգային դրամի արժեքավորումը ԱՄՆ դոլարի նկատմամբ ներկայումս տեղի է ունենում ամբողջ աշխարհում և պայմանավորված է ԱՄՆ դրամական քաղաքականությամբ և մոտ ապագայում չի կարող փոխանակման կուրսի ազատական քաղաքականությունից հրաժարվելու պատճառ հանդիսանալ:

## **2.5.ՀՀ տնտեսական համակարգի համեմատությունը ԵՄ նոր անդամ և անդամակցող երկրների ցուցանիշների հետ և ԱՀՌԾ-ով նախատեսվող առաջընթացի գնահատականը**

Ծրագրի այս բաժնում խնդիր է դրված ԳՀՀ և ԵՀՔ շրջանակներում արդյունավետ համագործակցության ապահովման և եվրաինտեգրացման խորացման համար գնահատել ՀՀ

տնտեսության ներկայիս հեռավորությունը Եվրամիությունից Կոպենհագենյան հայտանիշներին բավարարելու առումով: Որպես համեմատության հիմք են օգտագործվում ԵՄ-25<sup>40</sup> ԵՄ-8<sup>41</sup> և 3 անդամակցող երկրները (Բուլղարիա, Ռումինիա և Խորվաթիա), ինչպես նաև Ռումինիայի<sup>42</sup> համապատասխան առանձնացված ցուցանիշները 1999, 2003 և 2004 թվականների դրությամբ<sup>43</sup>: Ծրագրի տնտեսական մասի հիմնական նպատակն է հետագա 3 տարիների համար, օգտագործելով համապատասխան ցուցանիշների ԱՀՌԾ և այլ փաստաթղթերով նախատեսված միջնաժամկետ և երկարաժամկետ հետազոտությունները, գնահատել Հայաստանի հարաբերական իրավիճակը ԵՄ անդամ և անդամակցող երկրների տարբեր խմբավորումների նկատմամբ. միջնաժամկետ՝ 2008թ., և երկարաժամկետ հեռանկարում՝ 2015թ. դրությամբ, և դրանով բացահայտել տնտեսության և տնտեսական քաղաքականության այն ոլորտները, որտեղ անհրաժեշտ է արագացված զարգացման ապահովում ԵՄ մակարդակին առավելագույնս մոտենալու համար:

Ծրագրի խնդիրների մեջ չի մտնում այդ ոլորտների երկարաժամկետ նպատակային ցուցանիշների սահմանումը և դրանց հասնելու համար անհրաժեշտ միջոցառումների նախատեսումը: Այդ խնդիրը պետք է լուծվի ԱՀՌԾ առաջին վերանայման ժամանակ, որը նախատեսվում է 2006թ. վերջին:

### **2.5.1. Համեմատական վերլուծություն**

- Համեմատական վերլուծության արդյունքները ներկայացված են հետևյալ կտրվածքներով.
- Հայաստանի ցուցանիշների (2006-2008թթ.) և 2015թ. հարաբերությունը ԵՄ-25 1999թ. համապատասխան ցուցանիշներին.
  - Հայաստանի ցուցանիշների (2006-2008թթ.) և 2015թ. հարաբերությունը ԵՄ-8, երեք անդամակցող երկրների և Ռումինիայի 1999թ. և հետագա տարիների համապատասխան ցուցանիշներին.
  - Համապատասխան միջակայքի սահմանումը ԵՄ-8 և անդամակցող երկրների համար 1999թ. կամ հետագա տարիների դրությամբ (ցուցանիշի առավելագույն և նվազագույն արժեքը) և Հայաստանի ցուցանիշների համեմատությունը այդ միջակայքի հետ (գտնվելը միջակայքի մեջ կամ միջակայքից դուրս):

### **2.5.2. Տնտեսական զարգացման բանական ցուցանիշների վերլուծությունը**

Աղյուսակ 4-ում ներկայացված են տնտեսական զարգացման հիմնական ցուցանիշի՝ 1 շնչին ՀՆԱ-ի համեմատության արդյունքները: Հայաստանի տնտեսական աճի սցենարը հիմնված է ԱՀՌԾ կանխատեսումների վրա, որոնք առաջ են տեղաշարժվել 3 տարով, 2005թ. համար տնտեսական աճի տեմպը կազմել է 13.9%, 2006թ. նախատեսված է 7% աճ, 2007-2011թթ. համար՝ 6%, 2012թ՝ 5.5%, 2013 և 2014թթ. համար՝ 5%:

Ինչպես երևում է աղյուսակից, այդ սցենարի դեպքում Հայաստանը 2013 թվականին կգերազանցի անդամակցող երկրների 1999թ. նվազագույն մակարդակը: ԱՀՌԾ նախատեսվածից ավելի արագ աճի տեմպերի դեպքում անդամակցող երկրների 1999թ. նվազագույն մակարդակին հնարավոր կլինի հասնել արդեն 2012թ.<sup>44</sup>, որը, ելնելով 2004-2005թթ. փաստացի մակարդակից և մոտակա տարիներին սպասվող արտաքին ֆինանսական ներդրումների էական աճից, («Հազարամյակի մարտահրավերների» և «Լինսի» հիմնադրամի շրջանակում, Ասիական զարգացման բանկին անդամակցելու արդյունքում և այլն) ավելի հավանական է, քան ԱՀՌԾ բավականին պահպանողական սցենարը:

<sup>40</sup> ԵՄ ներկայիս կազմը:

<sup>41</sup> ԵՄ նոր անդամ երկրները (բացառությամբ Մալթայի և Կիպրոսի ):

<sup>42</sup> Ռումինիան ընտրված է որպես համեմատության լրացուցիչ հենանիշ համապատասխան քլաստերային վերլուծության արդյունքներում (հավելված 2)՝ որպես Հայաստանին ամենամոտ գտնվող երկիրը (ընտրված համեմատական ցուցանիշների նվազագույն գումարային տարբերության առումով):

<sup>43</sup> 1999թ. ընտրված է ելնելով նրանից՝ որ նշված երկրների մեծամասնությունը սկսեց ԵՄ անդամակցության բանակցությունները այդ տարվանից:

<sup>44</sup> 2006-2014թթ. միջին տարեկան 9.92% (միջինը 1999-2005թթ. ժամանակահատվածի համար ) տնտեսական աճի դեպքում՝ ԱՀՌԾ նախատեսված 5.8%-ի համեմատ:

**Աղյուսակ 4. ՀՆԱ 1 շնչին համեմատության արդյունքները (1999թ. համապատասխան մեծության նկատմամբ %)**

	ԵՄ-25	ԵՄ-8	Անդամակցող երկրներ	Ռումինիա	Համեմատության միջակայքը	Գնահատական
Հայաստան 2005	5.78	23.03	51.8	63.84	(9.06 -61.7)*	Ոչ
Հայաստան 2008	6.99	27.82	62.56	77.1	(9.06 -61.7)	Ոչ
Հայաստան 2015	10.26	40.85	91.86	113.2	(9.06 -61.7)	Այո

Աղբյուրը՝ ԱՎՃ, Eurostat, ԱՀՌԾ

\* Որպես համեմատության միջակայքի ծայրակետեր վերցված են 1999թ. ԵՄ-8 և 3 անդամակցող երկրների 1 շնչի ՀՆԱ-ի ԵՄ-25 միջինի նկատմամբ նվազագույն (Բուլղարիա) և առավելագույն (Սլովենիա) արժեքները:

Աղյուսակ 5-ում բերված են ԵՄ-ի հետ Հայաստանի ներկայիս առևտրի համեմատությունները ԵՄ նոր անդամ երկրների, անդամակցող երկրների և Ռումինիայի հետ:

**Աղյուսակ 5. ԵՄ –15-ի հետ առևտրի ծավալների համեմատությունը (ապրանքային առևտրի ընդհանուր ծավալի նկատմամբ %)**

	Հայաստան 2005	ԵՄ-8 1999	Անդամակցող երկրներ 1999	Ռումինիա-երկրներ 1999
Առևտրը ԵՄ-15-ի հետ %*	34.8	65.82	63.40	62.86
Համեմատության միջակայքը	(47.8 -69.8)	(47.8 -69.8)	(47.8 -69.8)	(47.8 -69.8)
Գնահատական	Ոչ	Ոչ	Ոչ	Ոչ

Աղբյուրը՝ ԱՎՃ, Eurostat, World Development Indicators

Եվրամիության հետ առևտրի տեսակարար կշռի ցուցանիշները ԵՄ-ի հետ տնտեսական ինտեգրացման հիմնական ցուցանիշներից են: Չնայած Հայաստանի՝ ԵՄ-ի հետ առևտրի տեսակարար կշռը և հետևաբար տնտեսական ինտեգրացման աստիճանը ամենաբարձրերից մեկն է ԱՊՀ երկրների մեջ, այն, այնուամենայնիվ, էականորեն զիջում է նոր անդամ և անդամակցող երկրների ցուցանիշներին անդամակցության բանակցությունները սկսվելու պահի դրությամբ: Այդ առումով կառավարությունը խնդիր է դրում առաջիկա 10 տարվա ընթացքում ծանրեր գործադրել համեմատական միջակայքին հասնելու ուղղությամբ<sup>45</sup>: Այդ կապակցությամբ Եվրամիության հետ առևտրի առաջանցիկ աճի խթանումը հանդիսանում է սույն ծրագրի հիմնական գերակայություններից մեկը: Հիմնական միջոցառումներ այդ ոլորտում կհանդիսանան ԵՄ Արտոնությունների ընդհանուր համակարգի (GSP) հնարավորությունների ավելի լայն օգտագործումը<sup>46</sup> համապատասխան տեղեկատվության տարածման, արտահանման հետ կապված ձևակերպումների պարզեցման, ինչպես նաև ԵՄ ապրանքների ազատ տեղաշարժի ապահովման հետ կապված օրենսդրության և ինստիտուցիոնալ համապատասխանեցման միջոցով (մանրամասնությունները տե՛ս սույն ծրագրի 3-րդ մասի առաջին գլխում):

<sup>45</sup> Համեմատության միջակայքի նվազագույն արժեքը Լատվիայի ԵՄ-ի հետ արտաքին առևտրի ծավալն է 1999թ. դրությամբ:

<sup>46</sup> Ծրագրի այս մասում, որպես համեմատության հիմք, օգտագործվում են ԵՄ կենտրոնական բանկի 2004թ. տվյալները ԵՄ-8 երկրների համար, որոնցից բոլորը հանդիսանում են ԵԳՄ մասնակցության թեկնածուներ: Տե՛ս Convergence Report 2005. European Central Bank 2004.

2.5.2.1. Ֆինանսական կայունության վերլուծությունը<sup>47</sup>

Վերլուծության արդյունքները բերված են աղյուսակ 6-ում:

Աղյուսակ 6. Ֆինանսական կայունության ցուցանիշների համեմատությունը 2004-2005թթ. դրությամբ (Համաձայն Մասատրիխտի համաձայնագրի ԵԴՄ անդամակցության հայտանիշների)

	Գնաճը (ՄԳԻ), %	Բանկային Տոկոսադրույթները %	Համախմբված բյուջեի պակասորդը (ավելցուկը) (% ՀՆԱ)	Պետական պարտքը (% ՀՆԱ)
Չեխիա	1.8	4.7	-5	37.9
Էստոնիա	2	-	0.3	4.8
Լատվիա	4.9	5	-2	14.7
Լիտվա	-0.2	4.7	-2.6	21.4
Հունգարիա	6.5	8.1	-5.5	59.9
Լեհաստան	2.5	6.9	-5.6	47.2
Սլովենիա	4.1	5.2	-2.3	30.8
Սլովակիա	8.4	5.1	-3.9	44.5
ԵՄ-8 միջինը	3.75	5.67	-4.89	43.96
Համեմատության միջակայքը ԵԴՄ	(-0.2 -8.4)	(4.7-8.1)	(-5.6 - 0.3)	(4.8 - 59.9)
սահմանային արժեքները Հայաստան	2.4	6.4	-3	60
Համապատասխանությունը ԵՄ-8 միջինը ԵԴՄ	0.6 (2005)	17,29 (2005 դեկտեմբեր)	-1.76	35.7
Համապատասխանությունը ԵՄ-8 միջինը	Այո	Ոչ	Այո	Այո
ԵԴՄ սահմանային արժեքները	Այո	Ոչ	Այո	Այո
Համեմատության միջակայքը	Այո	Ոչ	Այո	Այո

Աղբյուրը՝ ԱՎԾ, Convergence Report 2005. European Central Bank 2004

Ինչպես ցույց է տալիս աղյուսակը, ԵԴՄ պահանջներից Հայաստանի հիմնական շեղումը պայմանավորված է տնտեսության ֆինանսավորմանը բանկային ոլորտի անբավարար մասնակցությամբ, դրա՝ հարաբերական փոքր չափերով, ինչպես նաև Հայաստանի տնտեսության ներկայիս բարձր ռիսկայնության աստիճանով: Ելնելով ֆինանսական ոլորտի աճող կարողությունից՝ տնտեսական զարգացման ապահովման գործում ՀՀ կառավարությունը և Կենտրոնական բանկը 2006-2008թթ. համալիր միջոցառումներ կիրականացնեն ֆինանսական ոլորտի, ներառյալ՝ բանկային համակարգի առաջանցիկ աճի և ինստիտուցիոնալ բարեփոխումների խրախուսման ուղղությամբ, նպատակ ունենալով մինչև 2015թթ. հասնել բանկային տոկոսադրույթների ԵԴՄ ներկայիս սահմանային արժեքների :

Ինչ վերաբերում է գնաճին, ապա 1999-2005թթ. զարգացումները թույլ են տալիս եզրակացնելու, որ տղաճի մեծությունը 2005-2008թթ. կհամապատասխանի ԱՀՌԾ կանխատեսումներին և ԵԴՄ ներկայացրած պահանջներին (երկուսով էլ նախատեսվում է տղաճ առավելագույն տարեկան 3 տոկոսի չափով): Վերջին տարիների զարգացումները վկայում են այն մասին, որ հետագայում ևս Հայաստանը առանց մեծ դժվարությունների կպահպանի ֆինանսական կայունությունը ԵՄԴ պահանջներին համապատասխան:

<sup>47</sup> A.Kaufman, A.Craay & M.Mastruzzi “Governance Matters IV: Governance indicators for 1996-2004”, The World Bank, 2005.

**2.5.2.2. Բյուջետային եկամուտների և տնտեսության ֆինանսավորման համեմատական վերլուծությունը (2003թ. դրությամբ)**

**Աղյուսակ 7. Բյուջետային ոլորտի և տնտեսության ֆինանսավորման ցուցանիշների համեմատությունը 2003թ. դրությամբ**

	Պետական բյջանքի վճարումներ ՆՆԱ %	Պետական բյջանքի ծախսեր ՆՆԱ %	Ներքին վարկավորում ՆՆԱ %	Տոկոս- տիրոջ ավելում %	Արժեթղթերի շուկա ՆՆԱ %	ՕՈՆ-ի ՆՆԱ %	ԶՊՕ* ՆՆԱ %
<b>Հայաստան</b>	17.70	16.40	8.7 (2005)	14.00	1.00	4.30	8.50
<b>ԵՄ-8 միջինը</b>	32.32	36.56	32.55	2.80	18.59	2.35	0.64
<b>Անդամակցող երկրների միջինը</b>	31.73	33.42	24.82	9.00	12.69	4.91	0.88
<b>Ռուսիին</b>	26.7	28.4	9.5	n/a	9.8	3.2	1.1
<b>Համեմատության միջակայքը</b>	(26.3 - 43.4)	(28.4 - 46.4)	(9.5 - 43)	(-1.4 - 10.1)	(8.5 - 41.7)	(1 - 9.8)	(0.2 - 2.1)
<b>Համապատասխանությունը</b>	Ոչ	Ոչ	Ոչ	Ոչ	Ոչ	Այո	Այո

Աղբյուրը՝ World Development Indicators -2005, World Bank 2005  
 \* ԶՊՕ (ODA)՝ զարգացման պաշտոնական օժանդակություն (զարգացման վարկեր և դրամաշնորհներ միջազգային կազմակերպություններից և օտարերկրյա պետություններից)

Աղյուսակից հստակ երևում է, որ Հայաստանի ներկայիս հիմնախնդիրներից մեկը, որը չի կարող համարժեք լուծում ստանալ միջնաժամկետ հեռանկարում, պետական եկամուտների հարաբերական ցածր մակարդակն է և, հետևաբար, պետության տնտեսության մեջ մասնակցության զգալիորեն ավելի ցածր աստիճանը, քան ԵՄ նոր անդամ և անդամակցող երկրներում: Այն պայմանավորված է մի շարք հանգամանքներով, մասնավորապես, հարկային վարչարարության հարաբերականորեն ցածր արդյունավետությամբ, սովորաբար տնտեսության մեծ ծավալներով (Համաշխարհային բանկի վերջին գնահատականներով սովորաբար տնտեսության ծավալները Հայաստանում կազմել են ՀՆԱ-ի 46 տոկոսը, որը զգալիորեն ավելի բարձր է, քան ԵՄ նոր անդամ և անդամակցող երկրներում): Համաձայն ԱՀՌԾ կանխատեսումների՝ հարկային եկամուտների մակարդակը պետք է աճի տարեկան մոտ 0.2 տոկոսային կետով (ՀՆԱ նկատմամբ), իսկ պետական քյուջեի ընդհանուր եկամուտների մակարդակը նախատեսված է 18.5%՝ ՀՆԱ 2008թ. և 19.9%՝ ՀՆԱ 2015թ. համար: Նույնիսկ այդ ցուցանիշներին հասնելու դեպքում պետության կապերը Հայաստանում նկատելիորեն կզիջեն ԵՄ նոր անդամ և անդամակցող երկրների ներկայիս ցուցանիշներին:

Այսպիսով, պետության հնարավորությունների ավելացումը, որը ուղղակիորեն կախված է հարկահավաքման ծավալներից, Հայաստանի հիմնական երկարաժամկետ գերակայություններից է:

Ինչ վերաբերում է տնտեսության ֆինանսավորման մեխանիզմներին, ապա Հայաստանը այդ առումով էականորեն տարբերվում է ԵՄ-8 և անդամակցող երկրներից: Այսպես՝ զարգացման պաշտոնական օժանդակության և ՕՈՆ-ի ծավալները 2003թ. կազմել են ՀՆԱ 12.8 տոկոսը կամ համախառն կուտակման կեսից ավելին (24.3%՝ ՀՆԱ 2003թ): Հաշվի առնելով նաև մեծածավալ ոչ պաշտոնական տրանսֆերտները, որոնք 1995-2004թթ. ստացել է Հայաստանը, և որոնք տարբեր գնահատականներով 2001-2004թթ. կազմել են ՀՆԱ 8-ից 12 տոկոսը, կարելի է եզրակացնել, որ Հայաստանում մինչև հիմա տեղի ունեցած արագ տնտեսական աճը հիմնականում ֆինանսավորվել է արտաքին աղբյուրների հաշվին:

Ինչպես վկայում է աղյուսակ 7-ը, պատկերը այլ է ԵՄ-8 և անդամակցող երկրներում, որտեղ 2003թ. տնտեսության արտաքին ֆինանսավորման ծավալները (ՕՈՆ-ը և ԶՊՕ-ն) կազմել են առավելագույնը 10.8 տոկոս ՀՆԱ (կամ համախառն կուտակման 34.8 տոկոսը՝ Էստոնիա), իսկ նվազագույնը՝ 1.4 տոկոս (կամ համախառն կուտակման 5.6 տոկոսը՝ Սլովենիա): Այսպիսով, Հայաստանի կախվածությունը արտաքին ֆինանսավորումից շատ ավելի բարձր է, քան ԵՄ-8 և անդամակցող երկրներում: Նման իրավիճակը, ելնելով

կանխատեսվող արտաքին ֆինանսավորման ծավալներից, կպահպանվի նաև միջնաժամկետ հեռանկարում:

Երկարաժամկետ կայուն տնտեսական զարգացման ապահովման տեսակետից, սակայն, ֆինանսական համակարգի առաջանցիկ զարգացումը անհրաժեշտ պայման է և հանդիսանում է երկրի հիմնական երկարաժամկետ գերակայություններից մեկը:

Մասնավորապես, տնտեսության ֆինանսավորման ԵՄ անդամակցող երկրների 2003թ. միջին ցուցանիշին հասնելու համար 2015թ. բանկային վարկավորման ծավալները 2006-2015թթ. ընթացքում պետք է աճեն տարեկան մոտ 18 տոկոսով կամ մոտ 3 անգամ ավելի արագ, քան ԱՀՌԾ կանխատեսված ՀՆԱ-ի աճը 2005-2008թթ. համար: Նշված աճի տեմպի պահպանման դեպքում 2015թ. տնտեսության ներքին վարկավորման ծավալները կկազմեն ՀՆԱ-ի 25.6 տոկոս՝ գերազանցելով Ռումինիայի 2003թ. մակարդակը, սակայն նկատելիորեն ավելի ցածր լինելով մնացած բոլոր ԵՄ նոր անդամ և անդամակցող երկրների 2003թ. մակարդակից:

Ինչ վերաբերում է արժեթղթերի շուկայի զարգացմանը, ապա, ելնելով վերջին տասնամյակի զարգացումներից, միջնաժամկետ, ինչպես նաև առաջին ԱՀՌԾ ողջ գործողության ժամկետում հեռանկարում հնարավոր չի լինի ակնկալել եղած տարբերության հաղթահարումը:

Ֆինանսական ոլորտի նկատելի աշխուժացման և տնտեսական զարգացման գործում ֆինանսական միջնորդության դերի նշանակալից ավելացման նպատակով ՀՀ կառավարությունը Կենտրոնական բանկի հետ համատեղ 2006թ. ընթացքում կմշակի և կընդունի ֆինանսական ոլորտի երկարաժամկետ զարգացման ծրագիրը՝ վերը նշված բոլոր և մի շարք այլ ոլորտների առաջանցիկ զարգացումը ապահովելու նպատակով:

### **2.5.3. Տնտեսական զարգացման որակական ցուցանիշների վերլուծությունը**

Ծրագրի այս մասում վերլուծության ենթարկված ցուցանիշները կոչված են գնահատելու Հայաստանի, ԵՄ-8 և անդամակցող 3 երկրների միջև այն տարբերությունները, որոնք վերաբերում են տնտեսության մասնավոր հատվածի զարգացմանը, կառուցվածքային բարեփոխումների հետ կապված իրավիճակին և երկրի կառավարման որակին:

Տնտեսության մասնավոր հատվածի զարգացման և կառուցվածքային բարեփոխումների հենանիշերի կանխատեսումները հիմնված են ԱՀՌԾ կանխատեսումների վրա և կատարված են՝ համաձայն ԵԶՎԲ անցումային երկրների գնահատման մեթոդաբանության: Կառավարման որակի ցուցանիշները և դրանց դինամիկան վերցվել են Համաշխարհային բանկի կառավարման որակի ցուցանիշների տվյալների շտեմարանից<sup>48</sup>, իսկ կոռուպցիայի համաթվի արժեքները վերցված են Transparency International 2005թ. տարեկան զեկույցից<sup>49</sup>:

<sup>48</sup> Transparency International: Global Corruption Perception Report –2005.

<sup>49</sup> Ռումինիայից հետո ամենաբարձր կոռուպցիայի համաթիվ այդ երկրներից 2004թ. ունեցել են Լեհաստանը և Խորվաթիան՝ 3.5, իսկ ամենացածրը՝ Սլովենիան՝ 6:

**Աղյուսակ 8. Տնտեսական զարգացման և կառավարման որակի ցուցանիշների համեմատական վերլուծությունը 2004թ. դրությամբ**

	Մասնավոր հատվածը ՀՆԱ %	Գների և առևտրի ազատականացում	Մրցակցության խրախուսում	Բանկային բարեփոխումներ	Ոչ բանկային ֆինանսական հաստատություններ	Ենթակառուցվածքային և բարեփոխումներ	Կառավարման արդյունավետությունը	Պետական կարգավորման որակը	Օրենքի իշխանություն համաժխտ	Կոռուպցիայի ինդեքսը
<b>Հայաստան 2004</b>	75.00	4.33	2.00	2.50	2.00	2.50	-0.34	0.05	-0.58	3.10
<b>Հայաստան 2008</b>	78.30	4.33	2.30	3.00	3.00	3.00	-0.15	0.24	-0.30	3.50
<b>Հայաստան 2015</b>	82.20	4.33	3.00	4.00	3.75	3.75	0.03	0.60	-0.15	4.60
<b>Միջինը ԵՄ-8</b>	76.34	4.31	2.91	3.66	3.19	3.22	0.72	1.08	0.68	4.64
<b>Միջինը անդամակցող երկրներ</b>	68.26	4.28	2.58	3.58	2.33	3.17	0.03	0.24	-0.02	3.50
<b>Ռումինիա</b>	70.00	4.33	2.50	3.00	2.00	3.50	-0.15	-0.06	-0.18	2.90
<b>Համեմատության միջակայքը</b>	(60 -80)	(4.165 -4.33)	(2.5 -3)	(3 -4)	(2 -3.75)	(2.75 - 3.75)	(-0.15 - 1.02)	(-0.06 - 1.61)	(-0.18 - 0.93)	(2.9 - 6)
<b>Համապատասխանությունը</b>										
<b>2004</b>	Այո	Այո	Ոչ	Ոչ	Այո	Ոչ	Ոչ	Այո	Ոչ	Այո
<b>2008</b>	Այո	Այո	Ոչ	Այո	Այո	Այո	Այո	Այո	Ոչ	Այո
<b>2015</b>	Այո	Այո	Այո	Այո	Այո	Այո	Այո	Այո	Այո	Այո

Ծանուցում: Աղյուսակի 2-ից 5-րդ ցուցանիշների առավելագույն արժեքը 4.33 է, որը համապատասխանում է զարգացած երկրներում կիրառվող ստանդարտներին, իսկ նվազագույնը՝ 1, որը նշանակում է որևէ բարեփոխումների բացակայություն: Այդ ցուցանիշների կանխատեսումները 2008 և 2015թթ. համար համապատասխանում են ԱՀՌԾ կանխատեսումներին:

Աղյուսակի 6-րդ ցուցանիշները արտահայտում են Կոպենհագենյան հայտանիշների ինչպես քաղաքական մասը (օրենքի իշխանության համաթիվը), այնպես էլ տնտեսական հայտանիշները՝ կառավարման արդյունավետությունը և պետական կարգավորման որակը: Նշված ցուցանիշների չափման ոլորտը -2.5 – 2.5 միջակայքում է, որտեղ ավելի մեծ արժեքները բնութագրում են պետության արդյունավետության կամ ժողովրդավարության ավելի բարձր աստիճանը: 2004թ. դրությամբ Հայաստանը կառավարության արդյունավետության համաթիվը զբաղեցնում էր 127-րդ տեղը 214 երկրներից, պետական կարգավորման որակի համաթիվը՝ 93-րդ տեղը 203 երկրներից, իսկ օրենքի իշխանության համաթիվը՝ 132-րդ տեղը 207 երկրներից:

Կոռուպցիայի ինդեքսի առավելագույն արժեքը 10 է, որը համապատասխանում է բացարձակ «մաքուր» պետությանը, իսկ նվազագույն արժեքը՝ 0՝ բացարձակ կոռումպցված պետությանը: 2004թ. դրությամբ Հայաստանը զբաղեցնում էր 82-րդ տեղը 146 գնահատված երկրներից:

Ինչպես երևում է աղյուսակից, 2004թ. Հայաստանը տնտեսական բարեփոխումները բնութագրող 6 ցուցանիշներից 3-ով տեղավորվում է համեմատական միջակայքում: Ըստ ԱՀՌԾ կանխատեսումների՝ 2008թ. դրությամբ Հայաստանը չի բավարարի ԵՄ-8 և անդամակցող երկրների 2004 նվազագույն ցուցանիշներին միայն մրցակցության խրախուսման բնագավառում, իսկ 2015թ. կհասնի ԵՄ-8 երկրների 2004թ. միջին մակարդակին:

Ինչ վերաբերում է կոռուպցիայի համաթիվին, վերջին տարիների առաջնթացը (2004թ. համաթիվի 3.1 արժեքը՝ համեմատած 1998թ. 2.1 արժեքի հետ) թույլ տվեց 2003թ. սկսած՝ ապահովել համապատասխանությունը (2003թ. համաթիվ արժեքը կազմել է 3.0՝ Ռումինիայի 2.8 ցուցանիշի համեմատ), սակայն կոռուպցիայի մակարդակը Հայաստանում դեռ մնում է նկատելիորեն ավելի բարձր, քան ԵՄ բոլոր նոր անդամ և անդամակցող երկրներում, բացառությամբ Ռումինիայի<sup>50</sup>: Այդ առումով ՀՀ կառավարությունը նպատակ է դնում 2006-2015թթ. ընթացքում, հիմնվելով 2004թ. ընդունված Հակակոռուպցիոն ծրագրի միջոցառումների վրա, էականորեն նվազեցնել կոռուպցիայի մակարդակը՝ որպես նպատակային հենանիշ օգտագործելով 2008թ. համար ԵՄ անդամակցող երկրների միջին, ինչպես նաև Լեհաստանի և Խորվաթիայի 2004թ. մակարդակը՝ հասնելով 2015թ. ԵՄ-8-ի 2004թ. կոռուպցիայի միջին մակարդակին:

<sup>50</sup> Պետական կարգավորման որակի ցուցանիշի արժեքը էականորեն աճել է 1996-2004թթ. ընթացքում (-0.74-ից մինչև 0.05):

Ինչ վերաբերում է աղյուսակ 8-ի 7-րդ, 8-րդ և 9-րդ ցուցանիշներին, ապա համեմատաբար բարվոք է վիճակը պետական կարգավորման որակը բնութագրող ցուցանիշի առումով, որով Հայաստանը ներկայումս գերազանցում է Ռումինիային<sup>51</sup>, սակայն ինչպես և կոռուպցիայի համաթվով, էականորեն զիջում է մնացած բոլոր նոր անդամ և անդամակցող երկրներին: Այդ առումով 2006թ. ընթացքում կառավարությունը կմշակի և կսկսի իրագործել պետական կառավարման արդյունավետության բարձրացման համալիր ծրագիր, որի պետական կարգավորման որակին վերաբերող մասում 2008թ. համար նպատակային հենանիշ կլինի համապատասխան ցուցանիշի 0.24 արժեքը (անդամակցող երկրների 2004թ. միջին մակարդակը), իսկ 2015թ. համար՝ 0.6 արժեքը (Բուլղարիայի 2004թ. մակարդակը):

Ներկայիս իրավիճակը պետական կառավարման արդյունավետության և հատկապես օրենքի իշխանության ոլորտում կառավարությունը չի կարող համարել բավարար: Կառավարության արդյունավետության ցուցանիշով 2004թ. դրությամբ Հայաստանը զիջում է ոչ միայն ԵՄ բոլոր նոր անդամ և անդամակցող երկրներին, այլ նաև Ռուսաստանին: Ինչ վերաբերում է օրենքի իշխանությունը բնութագրող համաթվին, չնայած դրան, որ Հայաստանում 2004թ. դրությամբ դրա արժեքը ամենամեծն էր ԱՊՀ երկրների մեջ, այն իր հարաբերական արժեքով զիջում է սույն ծրագրով քննարկված համարյա բոլոր ցուցանիշներին, բացառությամբ ֆինանսական և բյուջետային ոլորտի ցուցանիշների:

Վերը նշված պետական կառավարման արդյունավետության բարձրացման համալիր երկարաժամկետ ծրագիրը կկենտրոնանա նաև պետական կառավարման արդյունավետության և օրենքի իշխանության ոլորտների վրա: Ելնելով լուծում պահանջող կուտակված հիմնահարցերի երկարաժամկետ բնույթից՝ նպատակային հենանիշերը այստեղ ավելի համեստ բնույթ ունեն: Մասնավորապես, կառավարման արդյունավետության ոլորտում նպատակ է դրվում 2008թ. հասնել Ռումինիայի 2004թ. մակարդակին, իսկ 2015թ.՝ անդամակցող երկրների 2004թ. միջին մակարդակին: Օրենքի իշխանության ոլորտում, որտեղ տարածությունը ԵՄ-8 և անդամակցող երկրներից ավելի մեծ է, նախատեսվում է մինչև 2008թ. մոտ 2 անգամ ավելացնել համաթվի մեծությունը և միայն 2015թ. գերազանցել Ռումինիայի 2004թ. մակարդակը<sup>52</sup>:

<sup>51</sup> Ի տարբերություն այլ ցուցանիշների՝ այս ցուցանիշի գծով արձանագրված է որոշակի հետընթաց՝ 1996թ. այն գնահատվել է -0.46, 1998թ.՝ -0.35, և 2002թ.՝ -0.52:

<sup>52</sup> Համեմատական վերլուծության ընթացքում ՀՀ ցուցանիշները համեմատվում են Եվրամիության ցուցանիշների հետ երկու ֆորմատով. 15 սկզբնական երկրների (ԵՄ-15) և ներկայիս ամբողջական կազմի (ԵՄ) ցուցանիշների հետ:



## 2.6. Եզրակացություն

Հայաստանի և ԵՄ նոր անդամ ու անդամակցող երկրների միջև տարածության ընդհանրացված պատկերը բերված է աղյուսակ 9-ում:

**Աղյուսակ 9. Հայաստանի և ԵՄ-8 ու ԵՄ անդամակցող երկրների հիմնական ցուցանիշների հարաբերակցության դինամիկան 2004-2015թթ. (ըստ ԱՀՌԾ և սույն ծրագրի կանխատեսումների)**

Ցուցանիշը	Համեմատության միջակայքի մեջ գտնվելը		
	2004	2008	2015
ՀՆԱ մեկ շնչին 2004թ. համադրելի գներով	Ոչ	Ոչ	Այո
Գնաճը (ՄԳԻ), %	Այո (2005)	Այո	Այո
Բանկային տոկոսադրույքները %	Ոչ	Ոչ	Այո
Համախմբված բյուջեի պակասուրդը (ավելցուկը) (% ՀՆԱ)	Այո	Այո	Այո
Պետական պարտքը (% ՀՆԱ)	Այո	Այո	Այո
Պետական բյուջեի եկամուտներ % ՀՆԱ	Ոչ	Ոչ	Ոչ
Պետական բյուջեի ծախսերը % ՀՆԱ	Ոչ	Ոչ	Ոչ
Տոկոսադրույքի սպրեդ %	Ոչ	Ոչ	Այո
Ներքին վարկավորում % ՀՆԱ	Ոչ	Այո	Այո
Արժեթղթերի շուկա % ՀՆԱ	Ոչ	Ոչ	Ոչ
ՕՈՆ % ՀՆԱ	Այո	Այո	Այո
ԶՊՕ % ՀՆԱ	Այո	Այո	Այո
Տնտեսության մասնավոր հատվածը, % ՀՆԱ	Այո	Այո	Այո
Գների և առևտրի ազատականացման համաթիվը	Այո	Այո	Այո
Մրցակցության խրախուսման համաթիվը	Ոչ	Ոչ	Այո
Բանկային բարեփոխումների համաթիվը	Ոչ	Այո	Այո
Ոչ բանկային ֆինանսական հաստատությունների համաթիվը	Այո	Այո	Այո
Ենթակառուցվածքների բարեփոխումների համաթիվը	Ոչ	Այո	Այո
Կառավարման արդյունավետության համաթիվը	Ոչ	Այո	Այո
Պետական կարգավորման որակի համաթիվը	Այո	Այո	Այո
Օրենքի իշխանության համաթիվը	Ոչ	Ոչ	Այո
Կոռուպցիայի համաթիվը	Այո	Այո	Այո

Աղյուսակից հստակ երևում է, որ սույն ծրագրի, ինչպես նաև ԱՀՌԾ հաջող իրականացման դեպքում էականորեն կկրճատվի տարբերությունը Հայաստանի և ԵՄ նոր անդամ ու անդամակցող երկրների միջև:

ԱՀՌԾ և սույն ծրագրի շրջանակներում երկարաժամկետ կանխատեսման ենթարկված 20 ցուցանիշների գծով 2004թ. 12 ցուցանիշներ ավելի ցածր էին, քան ԵՄ ֆինանսական կայունության պահանջները կամ գտնվում էին վերը նշված տարբեր համեմատման միջակայքերից ներքև: 2008թ. դրությամբ կանխատեսվում է կրճատել այդ ցուցանիշների թիվը մինչև 6-ի, իսկ 2015թ.՝ մինչև 2-ը՝ դրանով կտրուկ ավելացնելով ԵՄ և Հայաստանի ինտեգրացման աստիճանը: Նշված արդյունքներին հասնելու համար կենսական նշանակություն ունի կայուն տնտեսական աճի շարունակությունը, ԱՀՌԾ կանխատեսումների իրականացումը, սույն ծրագրի 3-րդ մասում նշված ԵՄ օրենսդրության համապատասխանեցման իրականացումը և համապատասխան օրենսդրական ակտերի արդյունավետ կիրարկումը:

Ընդհանուր առմամբ, ՀՀ կառավարությունը ԱՀՌԾ սցենարը համահունչ է համարում Հայաստան-Եվրամիություն Գ-ՀՀ իրականացման Ազգային ծրագրի պահանջներին և բավարար նախադրյալներ է տեսնում Եվրամիության հետ Հայաստանի արդյունավետ տնտեսական համագործակցության համար:

Աղյուսակ 9-ում բերված ֆինանսական համակարգի և պետական կառավարման համակարգերի հետագա զարգացման նպատակային համաթվերին նախանշված ժամկետներում հասնելու նպատակով ՀՀ կառավարությունը 2006թ. ընթացքում կնշակի և կսկսի

իրագործել 2 նոր համալիր երկարաժամկետ ծրագրեր՝ ֆինանսական ոլորտի զարգացման ծրագիրը (Կենտրոնական բանկի հետ համատեղ) և պետական կառավարման արդյունավետության բարձրացման ծրագիրը:

Ինչ վերաբերում է պետական եկամուտների և ծախսերի մակարդակներին, ինչպես նաև արժեթղթերի շուկայի ծավալներին, ապա դրանք կանխատեսող մեծությունները չեն կարողանա ապահովել 2006-2015թթ. համեմատության միջակայքի մեջ մտնելը: Այստեղ առաջնային գերակայություն կհանդիսանա ԱՀՌԾ կանխատեսումների իրականացումը:

Հավելված. Քլաստերինգ

Քլաստերը	Երկիրը
1	Սլովենիա
2	Չեխիա Էստոնիա Հունգարիա Լեհաստան Սլովակիա
3	Բուլղարիա Լատվիա Լիտվա
4	Ռումինիա Հայաստան

Ծանուցում՝

Օգտագործվել է քլաստերինգի երկքայլ եղանակը (BIC չափանիշի հիման վրա)

Խմբավորման համար օգտագործվել են հետևյալ ցուցանիշները.

1. Մասնավոր հատվածի բաժինը ՀՆԱ-ում (%)
2. Արտաքին առևտրի և արժույթային համակարգի ազատականացման համաթիվ (1-4.3 միավոր)
3. Հակամենաշնորհային քաղաքականության համաթիվ (1-4.3 միավոր)
4. Բանկերի ներքին վարկավորում (% ԵՄ միջին ցուցանիշի համեմատ)
5. Ոչ բանկային ֆինանսական ինստիտուտների բարեփոխման համաթիվ (1-4.3 միավոր)
6. Ենթակառուցվածքների բարեփոխման համաթիվ (1-4.3 միավոր)
7. Սեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն, ԳՀՀ (% ԵՄ նույն ցուցանիշի համեմատ)
8. Գ-նաճի միջին տարեկան տեմպը (% ԵՄ միջին ցուցանիշի համեմատ)
9. Արդյունաբերության և գյուղատնտեսության մեջ ստեղծված ավելացված արժեքի հարաբերակցությունը (% ԵՄ միջին ցուցանիշի համեմատ)
10. Արտաքին պարտք (% ՀՆԱ նկատմամբ)
11. Համախմբված բյուջեի հաշվեկշիռ (% ՀՆԱ նկատմամբ)
12. Բնակչությունը (% ԵՄ բնակչության համեմատ)
13. Մայրաքաղաքի միջին հեռավորությունը ԵՄ մայրաքաղաքներից (կմ)
14. Օրենքի իշխանության համաթիվ (% ԵՄ միջին ցուցանիշի համեմատ)
15. Կոռուպցիայի վերահսկման համաթիվ (% ԵՄ միջին ցուցանիշի համեմատ)
16. Կառավարման արդյունավետություն (% ԵՄ միջին ցուցանիշի համեմատ)
17. Փախստականների թիվը՝ ըստ ծագման վայրի